

## ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐՈՒ ԾԱՂԿԱԾ ՓՇԱԼԱՐԵՐԸ ԵՒ ՍՏԱԼԻՆԵԱՆ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՅԼ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱՅԷԼԵԱՆ  
karine.rafaelyan@mail.ru

1930ականներին ԽՍՀՄում տիրող վարչակարգը, ի դեմս արժանապատիւ, մարդկայնութեան գաղափարներին հաւատարիմ գրականութեան ու արուեստի, ունեցաւ ընդդիմադիր հզօր ուժ, որը թէ՛ այն օրերին, թէ՛ մանաւանդ յետագայում գեղարուեստի դատաստանի առջեւ կանգնեցրեց ամբողջատիրութեան ողջ արատները: Կեանքի կոչուեց գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնների մի նոր որակ, որի թեման անձայրածիր երկրի տարածքում մոլեգնող անօրինութեան, բռնութեան, կեղծիքի ու մատնութեան՝ օրըստօրէ ահազնացող համաճարակն էր:

*«Արուեստը պէտք է հասկանալի դարձնի նաեւ դժբախտութիւնը, աղէտը, չարիքն ու յանցագործութիւնը՝ ամէն րեսակ վայելքին ու երանութեանը համահասար, պէտք է ներքուստ ծանօթացնի մեզ ամենայն սարսափելիին ու նողկալիին»*<sup>1</sup> գրել է Հեգելը:

Ռուս ականատար մտածող, գրող Ալեքսանդր Սոլժենիցինն էլ իր գնահատականն է ձեակերպել այդ երեւոյթի առնչութեամբ. *«Կեղծիքի դէմ կուտւմ արդէն արուեստը մի՛շտ յաղթել է, մի՛շտ յաղթում է - բոլորի համար ակնյայտ եւ անժխտելի: Շատ բաների դէմ աշխարհում կարող է դիմակայել կեղծիքը, բայց միայն ոչ՝ արուեստի»*<sup>2</sup>: Այս յայտարարութիւնն արել է նա իր նորելեան դասախօսութիւնում:

Ստալինեան իրականութիւնը պատկերող գրական երկերը, ունենալով թեմատիկ ընդհանրութիւն, ենթակայ են որոշակի դասակարգման, որ կարող է ելակէտ ունենալ տարբեր սկզբունքներ: Ժանրային պատկանելութեան առումով այդ երկերը բաժանուում են հիմնական երկու խմբի՝ վաւերագրութիւններ, որոնցում ներկայացուած են պատմական ճշգրիտ փաստերը, ժամանակագրութիւնը, անձինք ու նրանց արարքները, եւ գեղարուեստական ստեղծագործութիւններ՝ պատմական փաստերի, իրական դէպքերի եւ անձանց

գեղարուեստականացում արտացոլմամբ՝ յաճախ նաեւ սիւժէտային պատումի այլաբանական լուծումներով: Այս ստեղծագործութիւնները նաեւ զանազանում են գրական ժանրի տարբեր ճիւղերին իրենց պատկանելութեամբ: Դրանցում կարելի է հանդիպել թէ՛ արձակ, թէ՛ չափածոյ գործերի: Եւ նախած այս ու բազմաթիւ այլ տարբերութիւնների, որ կարելի է մատնանշել ստալինեան բռնութեան պատկերները նկարագրող գրական երկերում, մի բան դրանցում որոշակիօրէն յստակ է ու անփոփոխ. դրանք բոլորը համատարած վախի, հետապնդումների, զանգուածային ձերբակալութիւնների, անմեղ մարդկանցով բանտերն ու արքորավայրերը լցնելու, անգամ նոյնանման գազանային մեթոդներով խոշտանգելու եւ սուտ ցուցմունքներ կորզելու մասին պատմութիւններ են՝ արուած խորհրդային անծայրածիր, բազմազգ պետութեան տարբեր հատուածներում ապրող ու տառապող մարդկանց կողմից: Այն մարդկանց, որոնց միատրել ու նոյնացրել էր համընդհանուր չարիքը: Այդ երեւոյթի մասին իր դիտարկումն է արել Դափթ Գասպարեանը *Գորգէն Մահարի* աշխատութիւնում. «*Մահարին յիշողութեամբ վերականգնեց ժամանակի պատկերը եւ անձնական կեանքի փորձը ծովեց երեանից Սիբիր ձգտող ճանապարհի բանկերում հանդիպած փոսապող բազմազգ ժողովրդի ճակատագրին: Իրօք որ այդ համապարած բռնութիւնների ենթարկուածներին կարելի է փալ 'խորհրդային ժողովուրդ' պաշտօնական բնորոշումը: Այլ կիրառումներով խորհրդային ժողովուրդը հասկացութիւնը չունեցաւ եւ յետադարձ հայեացքով չունի այնքան միասնական եւ ճշգրիտ նշանակութիւն, որքան սրայինեան բռնութիւններին ենթարկուածների դէպքում»<sup>3</sup>:*

Ընդ որում՝ ամենայն մարդկայինի, բնականի դէմ բռնաճնշումների ահռելի դրսեւորումները ստիպել են գրիչ վերցնել ու իրենց տեսած-ապրածը վաւերագրել ոչ միայն գրականութեանը ծառայելու կոչուած մարդկանց՝ գրողներին, այլեւ բանտ-արքոր-մահապատիժ երեւոյթներին առնչուած ու սարսափի մղձաւանջում գրելու ինքնաբոլոս մղումը զսպել չկարողացող շատ ոչ-գրողներին:

«Գրականութեամբ զբաղուելը անվտանգ չէր: Մեր գրքերում ճշմարտութիւնն սկսեց սպրդել մաքսանենգօրէն, Պարոնեանի դիպուկ բանածեւումով՝ ծակումուտ պահուլտելով: Առաջ եկաւ գրականագէտների (եւ ինչո՞ւ միայն գրականագէտների) յատուկ մի տեսակ, որն զբաղում էր ոչ թէ գրքի քննադատութեամբ, այլ հենց, յատկապէս, այդ 'ծակումուտ ճշմարտութիւնները՝ երեան հանելով: *Երկիր Նայիրիի* եւ *Կեօրէսի* ժամանակներն անդառնալիօրէն անցել էին»<sup>4</sup>:

Շայ գրողները բաժանուեցին երկու խմբի. մի մասը լիովին իրացրեց ժամանակաշրջանի պահանջները եւ իր գրիչն ու հոգին նուիրաբերեց

փառանով տիրակալի անձին ու գործին, պանծացրեց ժամանակի տւերերի աշխարհը: Միւս մասը հաւատարիմ մնաց մտատրականի, արուեստագէտի իր կոչմանը, չուրացաւ իր սկզբունքներն ու խիղճը: Հենց վերջիններս էլ դարձան 1937ի արիւնոտ սպանդի թիրախ ու նահատակ: Ահա այդ անունները. Եղիշէ Չարենց, Ակսէլ Բակունց, Վահան Թոթովենց, Չապէլ Եսայեան, Լեռ Կամսար, Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն, Վահրամ Ալազան ու էլի շատերը: Այս գրողներից իւրաքանչիւրի վրայ կարելի է տարածել բանասիրութեան թեկնածու, չարենցագէտ Անահիտ Ադամեանի գնահատականը՝ տրուած Չարենցին. «...ապրում էր՝ ինչպէս գրում էր, ու գրում էր՝ ինչպէս ապրում էր: Իսկ դա դեռ ոչ մէկին չի ներուել»<sup>6</sup>: Այս գրողները դատապարտուեցին անազատութեան, արտորուեցին ու գնդակահարուեցին՝ իբրեւ ժողովրդի ու խորհրդային իշխանութեան թշնամիներ, դաշնակցական տետորիստներ<sup>6</sup>, տրոցկիստական<sup>7</sup> միացեալ կենտրոնի անդամներ, ազգի դաւաճաններ ու կուսակցութեան քայքայիչներ...: Մեղադրական ծեակերպումների պակաս այն օրերին չէր զգացում. տարատեսակ, զանազան հասնող մեղադրականներով հեղեղուած էր սովորական մարդու առօրեան:

Իսկական տաղանդի բացակայութիւնը խթանեց անտաղանդութեան ու գեղարուեստական խոտանի ծաղկումը գրական աշխարհում: Դատապարտուած ու հալածուած ճշմարիտ արուեստին ի հակակշիռ՝ վերելք ապրեց անճաշակ ու սնանկ գրականութիւնը: «Քայց գրականութեան եւ արուեստի մէջ պարտութիւն կայ, որ յաղթանակ է, յաղթանակ կայ, որ պարտութիւն է: Որովհետեւ վերջնական արդիւնքում յաղթանակը ոչ թէ վարչական ուժի կողմն է, այլ՝ տաղանդի ուժի»<sup>8</sup> նկատում է Դաւիթ Գասպարեանը:

Այս ընթացքում ծնում էին նաեւ պատմական թեմատիկայով գրուած երկեր, որոնց առերեսոյթ չէզոք, քաղաքական որեւէ ուղղաձուգութիւնից զերծ բնոյթն իր խորքում նպատակ ունէր վերագնահատել ու վերապրեցնել մեր ազգային, պատմական արժեքներն ու ոգին: Այս առումով արժանաշիշատակ են յատկապէս Դերենիկ Դեմիրճեանի *Գիրք Ծաղկանց, երկիր Հայրենի*, Բակունցի *Խաչապուր Արուսեան*, Թոթովենցի *Կեանքը Հին Հոռմէական Ճանապարհի Կրայ* երկերը:

Մինչ հայ գրողներից շատերը հանդէս էին գալիս ստորաքարշ ուղերձներով՝ առ ժողովուրդների փառաբանեալ հայրը, Չարենցը գրում էր պոէմներ ու բանաստեղծական շարքեր, որոնցում նզովում ու խարազանում էր Ստալինին: *Գիրք Ճանապարհի*ի առաջին հրատարակութիւններում տեղ չգտած, քայց այդ երկի անբակտելի մաս կազմող «Աքիլէ՛ս, Թէ՛ Պիէրօ» պոէմը սկիզբ դրեց Առաջնորդի

(Ստալինի) եւ Չարենցի հակամարտութեանը, որն ունեցաւ եղերական հանգուցալուծում վերջինիս համար:

Ահա Չարենցի մի բանաստեղծութիւն՝ այն օրերի մղձաւանջի եւ դրա հեղինակ Իոսիֆ Ստալինի անձի անաչառ գնահատութեամբ.

*Բարձրավիզ կօշիկներ հագին՝  
Մի ուրբը Կրեմլի վրայ ծանր,  
Միաը Ուրալի վրայ,  
Գլուխը ամպերին յառած,-  
Որպէս ամեհի մի արծան,  
Կոլոսի<sup>9</sup> նման քարախորհուրդ  
Ծառացել է կերպարանքը նրա.-  
Հարհուրելի երեսոյթ չեղեալ  
Աշխարհում օրից առաջին:  
Աշխարհի վեցերորդ մասում,-  
Չինական պարսպից մինչեւ  
Սեծովեան ափերը ցերմ-  
Սառուցեալ Ովկիանոսից մինչեւ Մասիս-  
Այս անձիր եզերքի վրայ  
Փռուել է սպունքը նրա  
Եւ երկիրը կրում է հագի...  
Հսկայ առաջնո՞րդ Մարքսին հաւասար,  
Մտածո՞ղ, փրկի՞չ աշխարհահմայ...  
Ո՛չ, աշխարհացունց կապակիվզմների<sup>10</sup>  
Հանճարեղագոյն խոհարար է սա...  
Ո՛չ, անծայրածիր մի ամբողջ երկիր  
Մի արջի նման պարացնող է սա...  
Ինքնակալութեան ժառանգորդն է սա...  
Ո՛չ, ռուս ցարերի<sup>11</sup> Իւան Ահեղի,  
Ե՛ւ Պեպրոս Մեծի, ե՛ւ պորփիրակիր<sup>12</sup>  
Նիկոլաների վերջին ինքնակալ  
Ժառանգորդն է սա...<sup>13</sup>:*

Ստալինեան բռնութիւնների թեման իր արտացոլումն է գտել նաեւ օտարազգի հեղինակների չափածոյ երկերում: Անդրէյ Տուարդովսկոյ «Յիշողութեան Իրաւունքով» պոէմում կարդում ենք.

*Ի ծնէ խարան էր սահմանուած  
Մանկիկին՝ թշնամուց ծնուած,  
Եւ թում էր, թէ երկրին անվերջ  
Պակասում էին որդիք խարանուած<sup>14</sup>:*

Երեսնականների իրականությունը պատկերող երկերը լաւագոյնս ցուցանում են խորհրդային մարդու պարզամտութիւնն ու անտեղեակութիւնը կատարուած հալածանքների ահագնութիւնից: Գեղարուեստն ի ցոյց է դնում ուղեղի մթագնման մի համաժողովրդական ախտ, որի մանրէները սփռուած են ամէնուր՝ Ստալինի բարձրաստիճան գործակալների եւ մանր-մունր դիրքեր զբաղեցնող նրանց կոյր կամակատարների միջոցով: Իւրաքանչիւր քայլ դէպի ողջախոհութիւն դիտում է իբրեւ աններելի յանցագործութիւն եւ ստանում բիրտ հակահարուած: Իսկ հակահարուածի տեսակները տարբեր են՝ ընկերական դատերից, բակային 'վարչութեան' խարազանող ժողովներից մինչեւ ԳՊՈՒի<sup>15</sup> աշխատակիցների գիշերային "այցելութիւններ եւ ճամփորդութիւններ" անյայտ ուղղութիւններով՝ "սեւ ագռափ"<sup>16</sup> թեւերին:

*«Մի քանի փաստանշակների քաղաքական ձերբակալութիւնները մեզ մօտ փարբերում էին հենց նրանով, որ բռնում էին միանգամայն անմեղ, ուարի որեւիցէ դիմադրութեան չնախապատրաստուած մարդիկ: Դատապարտուածութեան ընդհանուր զգացողութիւն էր սրտեղծուել, պարկերացում (ի դէպ, անձնագրային մեր կարգի պայմաններում բաւականաչափ սրոյգ), որ ԳՊՈՒ<sup>17</sup>-ՆԿՎՊից<sup>18</sup> փախչելն անհնարին է: Եւ նոյնիսկ ձերբակալման համաճարակների թե՛ շրջանում, երբ մարդիկ աշխատանքի գնալիս ամէն օր հրաժեշտ էին փոխի ընդհանրին, քանզի վստահ չէին, թէ երեկոյեան փուն են դառնալու, նոյնիսկ այն ժամանակ համարեա չէին դիմում փախուստի (հազուադէպ ինքնասպան էին լինում): Ինչ եւ պահանջում էր: Խոնարի գառը գայլի ափամի բանն է»<sup>19</sup>:*

Մարդիկ, կորցրած ամենայն մարդկայինը, ամենայն ազգայինն ու անհատականը, այս հասարակարգում վերածում են արարածների բոլորովին նոր տիպի. այս պատուհասի մասին են գուժում գրողները: Նրանք սոսկումով նկատում են, որ մարդկային առողջ բանականութեան եւ զգացմունքների մթագնումը գերազանցում է բոլոր հնարատր սահամանները:

Մկրտիչ Արմէնի *Պափոկրեցին Յանձնել Ձեզ* ժողովածուի «Ազատուկ» պատմուածքը, թերեւս, ստալինեան բռնատիրութեան պայմաններում գոյատեւող հասարակութեան երկփեղկուածութեան ամենացնցող վկայութիւններից մէկն է: «Արհամարհո՞ւմ էին ազափ մարդիկ կալանատուներին, թէ ոչ, միեւնոյն էր, կալանատուներն իրենք արհամարհում էին նրանց եւ անուանում 'վոլենեաշկաներ', այսինքն՝ 'ազափուկներ'<sup>20</sup>: Եւ խզումը ազատութեան մէջ գտնուողների ու կալանատուների միջեւ բնորոշ էր բոլորին՝ անգամ ամենամերձատր ազատին ու անազատին: Այս իրողութեան ապացոյցն է Արմէնի գրական հերոսների՝ կալանատու Եֆիմ Լոշանինի եւ նրան տեսակցութեան եկած

կնոջ՝ Ելենա Լոշչանինայի հանդիպման պատմությունը: Տեսական ժամանակ ամուսնուն չտեսած կինը ցնցում է հանդիպման առաջին իսկ վայրկեաններից՝ զգալով իրենց միջև ընկած խոր անջրպետը: «Եֆիմը, նրա Եֆիմը, որ այնպեղ, աշխարհում, հպարտ արժանապատուութեամբ էր պահում իրեն բոլոր մարդկանց հեյտ, այժմ կանգնել էր՝ ինչպէս գինուորը հրամանատարի առջեւ... Ո՛հ, ո՛հ, գինուորն ու հրամանատարն այդպէս չեն լինում, նա կանգնել էր ինչպէս ոչ-մարդը մարդու առջեւ...»<sup>21</sup>: Արմէնը համոզիչ պատմութեամբ ցոյց է տալիս, որ կալանատու Եֆիմը եւ "ազատուկ" Ելենան հասարակարգի երկու հակադիր բեւեռներն են, որոնց միջև չի մնացել ընդհանուր ոչինչ: Կեանքի դաժան պայմանները Եֆիմի մէջ կործանել էին մարդուն, եւ նա չէր կարող, թէկուզ կարճ ժամանակով, վերադարձ կատարել 'ոչ-մարդ'ուց դէպի մարդը: Նրա համար 'ազատուկ'ն 'ազատուկ' էր, ով էլ որ լինէր: Եւ բախումն այս դէպքում անխուսափելի է, այն չի շրջանցում անգամ երբեմնի միմեանց սիրող ամուսիններին: Կնոջ գգուանքներն ու սիրալիրութիւնը անյարիր են կոպտացած, վայրենացած Եֆիմի ըմբռնումներին, եւ նա գերադասում է տեսակցութեան առաջին իսկ օրը վերադառնալ կալանավայր՝ իրեն հասկացող ու սրտակից կալանատուների միջավայր: Ճիշտ նոյն փոխյարաբերություններն են պատկերում Եուզ Ալեշկովսկու<sup>22</sup> «Անձնական Տեսակցութիւն» չափածոյ նորավէպում, որտեղ տեսակցութեան եկած կնոջ գգուանքներին ու զգացմունքային գեղումներին անհաղորդ ամուսինը միայն մի բան է տեսնում, որ յաջորդ անգամ տեսակցութեան գալիս՝ կինը չմոռանայ գործի դնել իրեն մանրամասնօրէն բացատրուած անպարարութիւնները՝ անցակէտով պահակներից թաքուն օղի անցկացնելու եւ ամուսնուն հասցնելու համար: Ահա թէ որն է կալանատուի 'նուիրական' երազանքների սահմանը:

Եթէ յիշեալ եւ մեր յետագայ շարադրանքում յիշելի հեղինակները խնդրոյ առարկայ նիւթին անդրադարձել են մասնատու դէպքի, մասնատու անձի ճակատագրի նկարագրութեան շրջանակներում, ապա Մահարին իր *Ծաղկած Փշալարեր* վիպակում տուել է 30ականների համապատկերի ամփոփ ու սպառիչ գեղարուեստավերագրութիւնը: Ահա այդ ժամանակի դէմքը. «Խարո՛յկ: Խարո՛յկ, խարո՛յկ: Փակեցէք ձեր աչքերն ու ականջները, մարդիկ, միջնադարը վերադարձել է... Հնծուած էր եւ շարունակում էին հնծել կուսակցական եւ կառավարական կարեւոր ղեկավարներին, բոլոր հիմնարկների պետերին ու պատասխանատուներին, հանրապետական գլխատու դատախազին ու դատախազներին, Կենտրոնի նոր քարտուղարին ու նրա աշխատակիցներին, շրջկոմ ու գործկոմ, համալսարանի դասախօս ու

վանեցի, ուսուցիչներ, գիտաշիններ, ուսանողներ, բարձր դասարանի աշակերտներ»<sup>23</sup>:

Ծաղկած Փշալարերը գրուել է 1965ին, առաջին անգամ լոյս է տեսել 1971-72ին, Նայիրի շաբաթաթերթում (Բէյրութ): Առանձին գրքով լոյս է ընծայուել 1986ին, դարձեալ Բէյրութում: Եւ միայն 1988ին «Արվեստական Գրող» Հրատարակչութիւնն առաջին անգամ հրատարակել է վիպակը մայր հայրենիքում ու ներկայացրել այն հայաստանցի ընթերցողի դատին:

Հայաստանեան հրատարակութեան առաջաբանում Դալիթ Գասպարեանը գրում է. «Ծաղկած Փշալարերը՝ ըստ մտայնացման պիտի անմիջականօրէն շարունակէր նրա կենսապատումը՝ սկսած 1936ից, եւ հասցնէր մինչեւ 1947 թուականը՝ ընդգրկելով գրողի առաջին քստորի տարիները: Այդ վիպակը գալիս էր շարունակելու եւ ոչ թէ ասարկելու նրա կենսի հնգապատումը, եթէ՛ Մանկութիւն՝, Պատանեկութիւն՝, Երիտասարդութեան Սեմին՝, եռագրութեանն աւելացնենք անաւարտ Երիտասարդութիւնը եւ այս վիպակը»<sup>24</sup>:

Գասպարեանը, իբրեւ ժամանակի վաւերագրութիւն եւ իբրեւ գեղարուեստական իրողութիւն, այսպէս է գնահատել Մահարու ինքնակենսագրական վիպաշարը. «Իր կենսի այս հնգապատումի գրութեան էջերով Մահարին վերակենդանացնում է հանրային, ազգային, քաղաքական, մշակութային իրադարձութիւնների բարդ պայմաններում մարդկային սերունդներին վիճակուած մի ամբողջ ժամանակաշրջանի որբան անձնական, նոյնքան էլ անանձնական կենսի հուսարի պայմութիւնը: Անմոռնջ ինքնակեղծքման գնով վերականգնած ճշմարտութեան մի այդպիսի անխարդախ վաւերագիր է Ծաղկած Փշալարեր՝ վիպակը»<sup>25</sup>:

Իհարկէ, Մահարին ստալինեան բռնութիւններին, 30ականների թեմային անդրադարձել է ոչ միայն Ծաղկած Փշալարեր վիպակում, այլեւ մի շարք փոքրածաւալ գործերում: Նորայր Ադալեանն այսպէս է բնորոշում Մահարու սիրիւրեան թեմաներով գրութեան ստեղծագործութիւնները. «Սիրիւրն այքիս առաջ կանգնեց որպէս դժոխք՝ մարդկային խեղութեան ճակատագրեր, ազնիւ հոգիների ցրտահար ստուերները, անասիման միայնութիւն, մօտեցող մահուան լուռ ոտնաձայներն անչափելի գոյութեան մէջ: Սիրիւրն ինձ համար դարձաւ Մահարին»<sup>26</sup>:

Այդ Սիրիւրը ենթադրում էր համամարդկային ու համախորհրդային այլասերութեան բարքերի յաղթարշաւ լայնատարած ողջ երկրի տիրոջութեամբ. երկիր, որի քաղաքացիների կենսակերպը թէ՛ կալանավայրերում, թէ՛ թուացեալ ազատութեան մէջ ուղղորդում էր գալլային կարգախօսների թելադրանքով: Այդ կարգախօսները հակիրճ

ու պատկերատր բանաձեւել է Մկրտիչ Արմէնը *Պատուիրեցին Յանձնել Ձեզ Ժողովածուի «Վեց Հիանդութեան Տէր Մարդը»* պատմուածքում: Թուարկենք դրանք:

*«Փրկուիր ով կարող է եւ ինչպէս կարող է»:*

*«Այսօր դու մեռիր, իսկ վաղը՝ ես»:*

*«Կեանքը գոյութեան կոհի է»:*

*«Դու ոչինչ չես փեսել ու ոչինչ չես յետ»:*

*«Մատնիչներին դատում է ժողովո՞ւ»<sup>27</sup>,<sup>28</sup>:*

Այս բանաձեւերի մերկապարանոց կիրառութեանն ենք իրազեկում՝ էջ առ էջ հետեւելով Մահարու վիպակի սիւժետային ընթացքին:

Դէպքերն սկսում են ծաւալուել այն պահից, երբ ստալինեան ճամբարի չորս քարտեպ բրուտագործներին (հեղինակ, Աշոտ դայի, ադրբեջանցի կառապան Մամօ, Վիլնիսի Պետական Համալսարանի նախկին ուսանող Իոնաս) հանգամանքների ու ճակատագրի բերումով, անելի ճիշտ՝ «Մեծ հայրիկ»ի (այսպէս էր կոչում Ստալինին խորհրդային հասարակութիւնը) «բարի» կամքով միանում է Բեռլինի Նկարչական Ակադեմիայում ուսանած գերմանուհի Լիւդմիլա Կարլովնա Շարթը: Անմեղ մեղաւորների խմբի այս նոր համալրումը առիթ է տալիս ճամբարի կեանքում մեղսական համարուող միջադէպերի. արասթումանցի<sup>29</sup> կառապանն ու ուսեպ գերմանուհին տրում են ճամբարային սիրոյ վայելքին, որը ճամբարի կեանքում պարտիզանական խիզախութիւն էր համարում: Այդ խիզախութիւնն իր հետ բերում է ծանր հետեանքներ, եւ Մամօն ու Լիւդմիլան բացառութիւն չն այս հարցում: Երբ կնոջ յղիութեան փաստով բացայայտում է այդ սիրոյ պատմութիւնը, Լիւդմիլային ուղարկում են մէկ այլ ճամբար, ուր սովորաբար ուղարկում էին «ճամբարային օրէնսդրութեան դէմ մեղանշածներին, բոլոր Մարիամ Մագդաղենացիներին»<sup>30</sup>: Եւ քանի որ այդ սիրոյ պտուղ-մանկիկը մահանում է ծնուելուց կարճ ժամանակ անց, ապա ըստ ճամբարային տրամաբանութեան սահմանուած օրէնքների՝ Լիւդմիլային վերադարձնում են իր նախկին կալանավայրը: Փոքրիկի ապրելու պարագայում սարսափն այլ նկարագիր էր ունենում. մօրն ուղարկում էին բոլորովին այլ պատժատեղի, որպէսզի չկարողանար երբեւէ հանդիպել ո՛չ իր երեխային, ո՛չ նրա հօրը:

Սիւժետային այս գլխատր գծին զուգահեռ, անելի ստոյգ՝ ընդմիջելով այն, ձեւատրում է մէկ ուրիշը՝ հեղինակի յիշողութիւնների շարահար շղթան, որը Մահարուն սիբիրեան ճամբարից բերում-հասցնում է երեանեան տօթակէզ փողոցները: Նրա մէջ վերակենդանանում են ձերբակալութեան օրոայ մղձաւանջային տեսարանները, Երեւանի բանտի մենախցում, ընդհանուր բանտախցում՝ «դիւժինգարդում»<sup>31</sup>, Վոլոզդայի<sup>32</sup> բանտում անցկացրած ծանր օրերը:

Ստալինեան բռնութիւնների թեմայով գրող հեղինակներից իւրաքանչիւրն անշուշտ, ունէր իր ուրոյն ոճն ու նկարագիրը, խնդրի առաջադրման ու հանգուցալուծման իր բանածելը, սակայն այս տարիներին եւ այս տարիների մասին ստեղծուած բազմաժանր գործերում նկատելի է մի ընդհանուր օրինաչափութիւն. գրողներն իրենց երկերում դիմում էին աստուածաշնչեան թեմաներին, կերպարներին ու ճշմարտութիւններին. թերեւս միակ հնարատր փրկութեան դուռն էր սա կայէններ եւ յուրաներ ծնող-սնուցող-բազմացնող հասարակարգի պայմաններում: Հաստի եւ սիրոյ առաջնայնութեան գաղափարն էր շարժիչ ուժը հեղինակների գերակշիռ մեծամասնութեան երկերում: Ասուածի բնորոշ դրսետրումներն են Մամօ-Շարթ սիւժետային գիծը Մահարու *Ծաղկած Փշալարեր* վիպակում, Վարպետ-Մարգարիտա սիւժետային գիծը Միխայիլ Բուլգակովի *Վարպետը եւ Մարգարիտան* վէպում, Ժիազօ-Լարա սիւժետային գիծը Բորիս Պաստեռնակի *Դոկտոր Ժիազօ* վէպում: Շարքը, իհարկէ, կարելի է շարունակել:

Տարբեր ստեղծագործութիւններում առկայ է խնդրի առաջադրման, սրման ու հանգուցալուծման միեւնոյն մեքենականութիւնը: Դէպքերի կենտրոնում տղամարդն է՝ տառապած, հալածուած, խոշտանգուած, կողքին կինն է՝ տուրրուած, բարի, անծնագոհ, որ դարմանում է ոչ միայն իր տառապեալ սիրելիի մարմինը, այլեւ մաքրագործում էութիւնը, հոգին: Անգամ անասունից մարդ է արարում, ինչպէս որ պատահեց Մահարու վիպակի հերոսների դէպքում:

Մահարու արձակը բանաստեղծական է՝ անկախ իր թուլանդակած թեմայից: Իսկ այդ թեմաներն առանձնապէս հիմքեր չէին տալիս բանաստեղծելու: Բռնադատուած ազատութիւն, ոտնահարուած արժանապատուութիւն, 'հիւանդ արդարութիւն', գազանային ծեծից, կտտանքներից խոշտանգուած կալանատուներ, աքսորեալ խոհարար Մետրոպ Ուզունեանի սահմանափակ, անպաճոյճ, բայց կեանքի, ժամանակի հրամայականով ամրագրուած կենսափոխիստփայութիւն. «- *իրեք պան կայ, մնացածը՝ հէչ, իրեք պան,- ուրուշ, խմուշ, սիրուշ. մափուսի մէջ սիրուշ չկայ, կը մնայ ուրուշ-խմուշ...*»<sup>33</sup>:

Բայց եւ այս ամէնի կողքին՝ բարձր արժեքների չընկրկող մաքառում. մարդուն վեհացնող, սրբագործող սէր, պայծառ երեսակայութեամբ վերականգնուած լաւ օրերի յուշ, անշունչ կափից կանացի քնքուշ, վտիտ մատներով հունցուած Պուշկինի, Չայկովսկսկու, Հայնէի գլխաքանդակներ: Եւ այս ամէնի կենտրոնում կանգնած է ինքը՝ գրողը՝ որպէս դէպքերի անմիջական մասնակից ու շարադրող:

Մահարին իր վիպակի իւրաքանչիւր դրուագում հետամուտ է 'հիւանդ արդարութեան' փաստի ու դրա 'թժշկման' հրամայականի բարձրաձայնմանը: Առողջ բանականութեամբ ոչ մի կերպ չընկալուող

իրապատում դիպուածները, որոնց հանդիպում ենք թէ՛ *Ծաղկած Փշալարներում*, թէ՛ Մահարու սիրիբեան թեմաներով գրուած այլ գործերում, թէ՛ բազմաթիւ հայ եւ օտարազգի հեղինակների գեղարուեստական եւ փաստագրական երկերում, անմեղօրէն դատապարտուած ու սպանուած անհաշիւ մարդկանց շառաչուն ապտակն ու անէծքն է՝ հասցէագրուած այդ գեհնը ծնած խորհրդային դահճապետին՝ Ստալինին:

Յանցագործների եւ ոչ-յանցագործների միջեւ ճգնաժող սահմանը ներկայացուող իրականութեան մէջ շատ տարտամ էր ու խարուխիկ: Իրաքանչիւր կարող էր փոխել իր ճամբարն ու յայտնուել անցարգելի հակառակ կողմում: Եւ սա մարդկանց մղում էր զաւեշտալի զգուշատրութեան: Զաւեշտալին յաճախ վերածում էր գազանութեան. զգուշատրութիւնը մարդկանց մղում էր գազանային քայլերի, վերածում մարդակերպ հրէշի, անգամ՝ մարդակեր գազանի (օրինակ՝ վիպակի այն հատուածը, որում նկարագրուած է թիֆլիսահայ Զինգաեւի փախուստը երեք աքսորեալի հետ):

Ծայրայեղ կասկածամտութիւն, մարդկային բնական բանականութեան ու զգացմունքների բացակայութիւն, տրամաբանութիւնից ու ողջախոհութիւնից զերծ հայեացք՝ շրջապատող իրականութեանն ու մարդկանց. սրանք են այն յատկանշական որակները, որոնք բնութագրում են մեր ուսումնասիրութեան դաշտում գտնուող երկերի հերոսներին:

Պարզ բանածեւ է. եթէ տուեալ հասարակութեան մէջ կան մարդակերպ գազաններ, ուրեմն պիտի լինեն նաեւ նրանց զոհերը: Վերջիններս խորհրդային լայնարձակ երկրի անմեղ աշխատատուներն ու մտաւորականներն են, որոնք 'ժողովրդի թշնամու', 'հակասովետական սրիկայի', 'դաշնակցական տեռորիստի'<sup>34</sup>, 'տրոցկիստի'<sup>35</sup> եւ այսօրինակ այլեայլ պիտակատրմամբ յայտնուել են գիշատիչների խրախճանքի սեղանին, իմա՝ ստալինեան բանտերում, աքսորներում, կառափնարաններում:

Եւ ինչպէ՛ս էին դատում այս մարդիկ: Ահա մահարիական վկայութիւնը. *«Նրանց չեն դատում, այսինքն՝ դատում են՝ բացակայութեամբ: Դրա համար գոյութիւն ունի տրոյկա, այսինքն՝ եռեակ: Նստում են երեքով, վերցնում հսկայական ցուցակներ, աշխատում սեւ ու կարմիր մատիտներով: Այսպէղ էլ երջանկութիւնը համեմատական է: Սեւ խաչատր անուն-ազգանուն կրողներն աւելի բախտաւոր են, քան կարմիր խաչատրները: Ամէն դէպքում խաչը մնում է խաչ»<sup>36</sup>:*

Այսպիսի դատից յետոյ կալանաւորը դադարում է մարդ լինելուց եւ վերածում համարի. *«Մենք հիմա մենք չենք, մենք համարակալուած,*

բայց այսպէս թէ այնպէս կենդանի միատրոներ ենք: Ես '222'ն եմ, օրինակի համար: Ինչպէս էլ գտան իսկական թիւս' 222, ոչ անել, ոչ պակաս...

Որովհետեւ եթէ մէկով անելի լինէր, կարող է սրացունել երեանի կոմիտէի քարոզողար, իսկ եթէ պակաս՝ ճարտարապետ... 222, ահա՛ ես, ոչ անել եւ ոչ պակաս:

Ու եթէ ես փախչեմ, այդպէս էլ կ'ասեն՝ 222ը փախաւ, ու եթէ իմ եւ բանտային բժշկի յարաբերութիւնները լաւանան, նա մի գեղեցիկ օր կ'ապացուցի, որ համր չէ: Կը խփի ուսիս եւ կ'ասի՝ 222, քէֆդ ո՞նց է:

Ու եթէ մայրս ինձ նամակ գրի, պիտի գրի. 'Որդեակ իմ, 222, սրացայ վերջին նամակդ եւ կարողալով շար...'

Ու եթէ ես միօրինակ ու փառքկալի կեանքս քիչ թէ շար բազմազան դարձնելու բարի նպատակով վերցնեմ ու մեռնեմ, չորրորդ յարկի պատրաստանապրու հերթապահն այդպէս էլ պիտի գեկուցի բանտապահին. '222-ը մեռաւ...':

Իսե՛ղճ 222»<sup>37</sup>:

Այս երեւոյթի մէկ այլ գեղարուեստականացում ենք տեսնում Բուզակովի *Վարպետը եւ Մարգարիտան* վէպում: «Փաստաթուղթ չկայ, մարդն էլ չկայ»<sup>38</sup>, - հնչում է ստալինեան գեեների այլաբանական հերոսի շուրթերից: Ասել է, թէ մարդը թիւ է, փաստաթուղթ, հաշուառուած ինչ-որ անշունչ միատր, որի գոյութեան եւ չգոյութեան միջեւ ձգուող սահմանն այդ մէկ հատիկ թղթից, հաշուառման մատեանում գրառուած մէկ տողից այն կողմ չի ձգում:

Այս գաղափարի հեղինակը ոչ այլ ոք էր, քան ինքը՝ Ստալինը: Վկայութիւնը կը գտնենք Անատոլի Ռիբակովի *Արբաբի Զաւակները* փաստագրական վէպում: «Չկայ մարդը եւ չկայ պորբլեմը»<sup>39</sup>. այս խօսքերն արտաբերում են Ռիբակովի վէպում գրական կերպարի վերածուած Ստալինի շուրթերով:

Մահարին գրում է, որ բանտերում ու արքորավայրերում, այնուամենայնիւ, կային նաեւ իսկական յանցագործներ՝ քրեականները, որոնց գոյութիւնը ոչ թէ սփոփում էր անմեղ-մեղաւորներին՝ քաղաքականներին, այլ շատ անելի ծանրացնում նրանց վիճակը: Քրեականներին տրուած էին քաղաքականներին ճշեցիլու, ստորացնելու լիազօրութիւններ, եւ նրանք չէին թերանում դրանք գործի դնելու հարցում, քանզի դա էր իրենց երդուեալ քրեական եւ ոչ բնաւ քաղաքական լինելն ապացուցելու լաւագոյն միջոցը: Այո՛, ստալինեան դժոխքում քրեական յանցագործութեան համար դատուելը մեծ բախտատրութիւն էր, բայց եւ կար մշտական վտանգը, թէ կարող ես դատուել քաղաքականների թուին, եթէ, օրինակ, ծի ես գողացել, որի

տէրը կուսակցական է, կամ կօշիկը կապելու թել ես պոկել ցախաւելից, որը բանտին պատկանող հանրային գոյք է:

Եւ որպէսզի որեւէ մէկն իրեն իրատունք չվերապահի հանգիստ գլուխը դնել բարձին եւ իրեն զգալ անխոցելի ու անպատժելի, ստալինեան մեքենան ժամանակ առ ժամանակ մաքրագրում էր նաեւ իրեն հաւատարիմ դահիճների շարքերը: Այս գործելաոճի ցայտուն պատկերն է տալիս Մահարին Երեւանի բանտի նախկին պետի ձերբակալութեան եւ կտտանքների նկարագրութեան միջոցով:

Կտտանքներին, ստորացումներին զումարում էր ամենասարսափելի փորձութիւնը՝ բաղը: Մահարու մօտ այս երեսոյթի նկարագրութիւնը ոչ թէ սոսկ իրական փաստի արձանագրում է, այլ վկայութիւնն այն բանի, որ մարդիկ խեղում էին ոչ միայն ֆիզիկապէս ու բարոյապէս, այլեւ հաշմտում էր նրանց ենթագիտակցութիւնը: Մարոն իր երազներում անգամ դադարում էր իր նման լինելուց, քանզի իրականութիւնը միայն իր տիրոյթներում չէր մամլում մարդուն, այն նաեւ սողոսկում էր ենթագիտակցական շերտերի մէջ. «*Հաց. ահա ինչով էր զբաղուած նրա (կալանատորի - Կ.Ռ.) ուղեղը: Ամէնից առաջ հաց, մեծ քանակութեամբ հաց, որ ուրի այնքան, որքան ցանկանում է: Կշտութեան զգացողութիւնից նա զրկուել էր այն օրից, երբ զրկուեց ազատութիւնից: Գիշերները երազում, առաջին շրջանում, նա դեռ տեսնում էր հարազատներին, իր սիրած եւ նախընտրած ուրելիքները, մօտիկ մարդկանց, իրենց տունը. ժամանակի ընթացքում, կեցութեան հետ, փոխուեցին նաեւ երազները: Հիմա նա երազում միայն հաց է տեսնում եւ ոչ այն տեսակ-տեսակ հացերը, որոնցով նա սնում էր տանը, ոչ, յատկապէս ճամբարային, բանտային գորշ եւ խտուածին հացը, հինգ հարիւր գրամ այն հացը, որն ուտում էր նա մէկ զարկով, մի ակնթարթում, իսկ ուրելուց յետոյ չէր կարող որոշել. երա՞զ էր դա, թէ իրականութիւն: Հաց ուրելու այս մեծ, սխրայի արարողութիւնը շարունակուում էր երազում, նա տեսնում էր բեռնատար մեքենաներ՝ բարձուած ճամբարային, յատկապէս ճամբարային հացի 'բուխանկաներով', որոնցից մի քանիսին տէր էր կանգնում նա եւ ուտում էր, ուտում երջանիկ մուրցքով, ուտում էր կապաղի ու անյագուրր»<sup>40</sup>:*

Մարդու ենթագիտակցութեան խեղման ցնցող օրինակների ենք հանդիպում նաեւ Մկրտիչ Արմէնի պատմութեամբաբանութեան: Օրինակ՝ «Ձառանցանք» պատմութեամբի հերոս Նիկոլայ Միխայլովն այնպէս էր սարսափած իր գլխում պտտուող առողջ մտքերը կառավարել չկարողանալու հետեւանքներից, որ այդ սարսափը, ի վերջոյ, նրան յանգեցնում է խելագարութեան: «Խորամանկ Մարդը» պատմութեամբի հերոս Իսախան Սիմակովը այնպէս է մտնում հիւանդ ձեռնալու դերի մէջ, որ ի վերջոյ, մահանում է հենց այն հիւանդութիւնից, որը

ծեսացնելուն էին ուղղուած նրա գիտակցական եւ ենթագիտակցական բոլոր մղումները:

Տարբեր հեղինակների երկերում բառացիօրէն կրկնուող սարսափ-պատմութիւնների շարքում նկարագրում է մէկ այլ փորձութիւն՝ ծարաւը, որին պէտք էր դիմանալ դէպի Սիբիր ուղեւորուող գնացքների վագոններում: Խորհրդային երկրի 'ամենաթանկ կապիտալով'<sup>41</sup> բեռնուած չարագուշակ վագոններից լսում էին ծարաւից նուազող կալանաւորների ձայները, ջուր աղերսող ճիչերը, ու այդ ճիչերը ճեղքելով՝ հզօր ակորդի պէս պայթում է Մահարու կծու հեգնանքը. «Ջո՛ւր փոքր, լայնափարած ու հարազա՛տ երկիր, քո խոնարհ ու ծարաւից մեռնող թշուառական զաւակներին, ովկիանոսներ են լուսնում քո անծայրածիր ակիւրը, ծովերով ես հարուստ ու լճերով, գետերով ու սառնաջուր աղբիւրներով, մի զլանայ նրանց քո ջուրը, չէ՛ որ դեռ բոլորիս հայրն է՝ ասել՝ Մարդն ամենաթանկ կապիտալն է...»<sup>42</sup>:

Սուրէն Ղազարեանի «Դա Չպէտք է Կրկնուի» յուշագրութեան էջերում նոյն երեւոյթի հետեւեալ նկարագրութեանն ենք հանդիպում. «Էփրատը<sup>43</sup> շափ փանջալից էր:

Դիփմամբ սրեղծել էին անտրանեյի պայմաններ: Մեր ունեցած փողերը վերցրել էին, եւ մենք հնարատրութիւն չունէինք որեւէ կերպ ճանապարհին ուղեւիչ գնելու, մեզ փալիս էին միայն հաց եւ շափ աղի հոփած հարինգ<sup>44</sup> ւս ինչ-որ կիսահում, կիսաապխտած ծանրահոփ ձուկ: Խմել էինք ուզում, բայց ջուրը սահմանափակում էին, եւ ամէն անգամ կոտով էինք սրանում: Էփրատի դժոխային պայմանները անելի էին ծանրանում, երբ մեզ չէր թոյլատրում օգտուել զուգարանից ըստ մեր կամքի: Պահակապետը մեզ զգուշացրեց, որ մեզ զուգարան գնալ թոյլ կը փան օրական երկու անգամ միայն, առաւօտեան եւ երեկոյեան, եւ ոչ որի ոչ մի դէպքում բացառութիւն չի արուի: Մենք շուտով համոզուեցինք, որ պահակները շափ խստօրէն կատարելու են այդ հրահանգը: Ոչ որի թոյլ չտրուեց որոշուած ժամերից դուրս օգտուել զուգարանից: Գործի դրուեցին գաւաթները, թասերը, նոյնիսկ կօշիկները... Կուպեում<sup>45</sup> առանց այդ էլ փասներեք հոգու համար օդ չկար: Սոսկալի հոփը փանջում էր մեզ, մինչեւ խեղդուելու ասփիճան: Ամէն ինչ արուած էր, որպէսզի ուրնահարուի մեր մարդկային արժանապատուութիւնը: Եւ երբ բողոքում էինք, սրանում էինք նոյն պատասխանը. 'Մի մոռացէք, որ բանտարկեալներ էք'<sup>46</sup>:

Յոյց տալու համար ստեղծուած կացութեան մէջ պայքարի, հակադրուելու անիմաստութիւնը, Մահարին նկարագրում է ճամբարից փախչող արկածախնդիրների անխուսափելի ձախողումը, քանզի համատարած բանտ ու արքայի վերածուած լայնարձակ երկրում, եթէ

փախչողներն անգամ ուղիղ գծով էին գնում, միեւնոյն է, դարձեալ յայտնում էին «ծաղկած փշալարերի» առջեւ:

Բայց Մահարին իր առջեւ խնդիր էր դրել ոչ միայն ցոյց տալ իրականութեան իրէշատր դէմքը, այլեւ պատճառաբանել մարդկանց մէջ կենսունակութեան նշոյլները չկորցնելու, կեանքից կառչելու ուժ գտնելու գաղտնիքը: Որպէս խորագէտ ու խորագնին հոգեբան՝ նա իր եւ իր նմանների համար բանաձեւել էր ապրելու գաղտնիքը. *«Ես նստում էի գեպուսիին փասից-փասնիինգ ըուպէ եւ օրինում էի աշխարհի սրեղծումն ու ծնունդը: Մոռացած բոլոր դառնութիւններն ու իմ թշուառ վիճակը՝ ես վերանում էի հոգով, սաառնում գործարար բակից հեռու, եւ զինուած պահակների մթքով անգամ չէր կարող անցնել, որ ես իմ ողջ էութեամբ գտնում եմ դուրս, անսահման դուրս նրանց հսկիչ կէտերից»*<sup>47</sup>:

Սա ուղղակիօրէն յիշեցնում է Մկրտիչ Արմէնի «Մոսկուան Ներսում» պատմութեամբ, հաստատագրում այն իրողութիւնը, թէ մտածող, ստեղծագործող հոգեկիցների ներշնչանքն ու դրա դրսեւորումն ունեն նոյնանման բանաձեւ: Պատմութեան գլխատր հերոսը՝ Լէոնիդ Կոզլովը, Մահարի-գրական կերպարի նման մարդու ներքին ազատութեան, հոգու անկախութեան գաղափարի կրողն է: Ահա թէ ինչպէս է նա մեկնաբանում իր ազատ լինելու զգացողութիւնը. *«Դու կարծում ես, թէ ազգպտութիւնը միայն ճամբարի շո՛ւրջն է,՝ դո՛ւով հարցրեց Լէոնիդն իր հասակակից պահակին:՝ Ծամբարի շրջանակը կենպորոնում բաց է, եւ այսպէղ էլ ազգպտութիւն է: Ես փախած եմ: Ես Մոսկուայում եմ»*<sup>48</sup>:

Այսուհանդերձ, համատարած թոհուրոհը, գլխավայր շրջուած բարքերը փոշիացնում են մարդու լուսաւոր մղումները: Մարդու՝ ստեղծագործելու անսպառ շնորհները ելք են որոնում կործանարար իրականութիւնից, սակայն հոգեվարքի ցնցումներ յիշեցնող նրա ճիգերն ի վերջոյ մարում են. մարդը խաղաղում է մահապարտի համակերպութեամբ: Եւ բնական է, որ այսպիսի պայմաններում ոչ միշտ է երեակայութեան թոհիքը, պատրանքին տրուելու՝ յուզառատ մարդու մղումը հանգուցալուծում բարի հեքիաթի հանգոյն: Մ. Արմէնի «Հին Տարուայ Գիշերը» պատմութեան օրինակն այս դէպքում կը համոզի մեզ:

Մ. Արմէնը, նկարագրելով իր արուեստագէտ հերոսի՝ Ագատովի հարուստ ներաշխարհը, այն հակադրութեան մէջ է դնում այլանդակ ու եղծուած բարքերի իրականութեան հետ՝ քայլ առ քայլ նախապատրաստելով նրա անխուսափելի կործանումը: Ագատովը դառնում է սեփական պատրանքի զոհը: Երեակայութեան թեւերով խուլ տայգայից Մոսկուա հասած եւ ծանօթ փողոցից իր բնակարանի լուսաւորուած պատուհաններին նայող Ագատովի մշուշուած հայեացքի առջեւ մի պարող զոյգ է ուրուագծում. *«Մէկն իր կիսն էր, իսկ միւսն իր քննիչը...»*

...հնչալես էլ որ լինէր, այդ քննիչներից ոմանց յաջողում էր հաւարացնել ձերբակալութաների կանանցից ոմանց, որ նրանք մինչեւ հիմա օձի հետք են ապրել մի յարկի փակ եւ չեն իմացել այդ: Այսինքն՝ ոմանք իմացել են եւ դրա համար էլ այժմ ամուսինների նման կրում են ճամբարների դառնութիւնները: Բայց անձամբ դուք, իհարկէ, չէք իմացել...

Եւ փոռեալ կինը, երախտապարտ մնալով իր հոգու փրկարարին, երբեմն փրում էր նրան՝ թէ՛ հոգով, թէ՛ մարմով...»<sup>49</sup>:

Իսկ թէ ինչ էին իրենցից ներկայացնում այդ «հոգու փրկարար» քննիչները՝ սահմուկեցուցիչ մանրամասնութիւններով նկարագրուած է մեր ուսումնասիրած բոլոր երկերում: Այդ երբեմնի մարդիկ վերածուել էին անհոգի գազանների, որոնք հրճում էին իրենց զոռը դարձած ծանօթ ու անծանօթ կալանատուներին դժոխային կտտանքների ենթարկելիս: Սուրէն Ղազարեանի «Դա Չպէտք է Կրկնուի» յուշագրութիւնից տեղեկանում ենք. «Յեղափոխութիւնն ընդունել էր փարփոհնակ պրովոկացիոն»<sup>50</sup> ձեւ: Նախապէս կազմում էին հարցաքննուողի ցուցմունքները, ներկայացնում բանտարկեալին եւ խոշտանգում այնքան, մինչեւ որ սպորագէր: Այդ ցուցմունքներում մարդիկ իրենց մեղատոր էին ճանաչում հակապետական, հակաեղափոխական, վնասարարական, լրտեսական, դիւերսիոն<sup>51</sup>, փրոցկիսական<sup>52</sup> եւ այլ գործողութիւնների մէջ: Քննիչները, սրանալով մեղադրեալի սպորագրութիւնը, փոխում էին իրենց վերաբերմունքը նրա հանդէպ, դառնում էին քաղաքավարի եւ նրանցից շարժերին՝ կարծաւորում՝ յափուկ ճաշերով»<sup>53</sup>:

Եւ որպէսզի քննիչներին՝ ստորագրութիւն կորզելու տիտանական ջանքը պսակուէր յաջողութեամբ, խորհրդային մեքենան ստեղծել էր նաեւ յատուկ որակներով օժտուած աջակիցների մի ամբողջ ինստիտուտ: Դարձեալ դիմենք Ղազարեանի վկայութեանը. «Սեւ գործի հեղինակները իրենց հրեշտոր նպատակների համար հաւաքագրում էին մարդկային փականքներին, զինում կրտսանքի գործիքներով, հրահրում նրանց մէջ վայրենի բնազդներ: Աւելին՝ հաւաքագրում էին նաեւ խելագարներին...»<sup>54</sup>:

Եթէ երեւակայութեան թոյլքով այս մղձաւանցից դուրս պրծնելու կարողութիւնը տրուած էր որոշակի հոգեւոր ու մտաւոր յատկանիշներով օժտուած դատապարտեալներին միայն, ապա կեանքին կապող մէկ այլ նախապայման գործում էր մտածողութեան, երեւակայութեան ցանկացած նշանող ունեցող կալանատորի համար, գործում էր շատ դէպքերում ոչ թէ բանականութեան ու հոգու, այլ քնազղային մղումի բերումով: Ազատութեան մէջ այն սէր են կոչում, կալանավայրում ու աքսորում՝ նոյնպէս: Թէեւ վերջին դէպքում սէր կոչուածը ձեւախեղուած

երեսոյթ ու նկարագիր ունի: Եւ այնուամենայնիւ, սէրը՝ իբրեւ ամենակարող բալասան, ապրելու ազդակ էր դառնում իւրաքանչիւր դատապարտեալի համար: «Կանանց էրապի՞՜ ժամանման լուրը ափոմային ռումբի նման պայթեց ճամբարում, մի պայթիւն, որից մարդիկ ոչ թէ մահացան, այլ վերածնունցին: Հիծուածների ու անդամալուծների բրիգադներն անգամ տեղահան եղան: Նրանցից շարերը դէն շարտեցին անթացուպերն ու ձեռնափայտերը, իրենց օրաբաժին հացը փոխին սափրիչներին, հերթից դուրս սափրուեցին, ազգաբուեցին սեւ, անգամ ալեխառն, ծերացող, խճճուած միրուքներից եւ դարձան մի-մի փեսացու, ճիշտ է, նիհար, գունապ, բայց փեսացու»<sup>56</sup>, - կարդում ենք Մահարու վիպակում:

Մահարու վկայութեամբ սկզբում ճամբարային «սեռական-պարտիզանական կեանք»<sup>57</sup> յորջորջուող երեսոյթն ունենում է հատուկ բնուր դրսետրումներ, բայց յետոյ կրում համատարած քնոյթ:

Եւ «Երբ արբասթումանցի՞<sup>58</sup> կտռապան Մամօն բրուպանոցի խոնաւ չորանոցում ալլախի կամքով սէր էր անում նկարիչ-քանդակագործուհի Լիւդմիլա Շարթի հետ, ճամբարային կենսակցութիւնը դադարել էր զարմանք պատճառելուց: Ոչ, ճամբարային ընտանիք կազմելու գործում Մամօն առաջիններից չէր»<sup>59</sup>:

Մահարու վիպակի գրական կերպարներից իւրաքանչիւրն ընթերցողին որոշակի ասելիք, որոշակի գաղափար հասցնող խօսափող է, կերպար-ընդհանրացում: Այդ կերպարները, իհարկէ, գրողին արտորակայրերում ու բանտերում հանդիպած իրական մարդիկ էին կամ պատմական հանրայայտ դէմքեր, բայց Մահարու գրիչը դրանցից կերտել է գրական լիարին, տիպական կերպարներ, *Ծաղկած Փշալարեր*ում դրանք դադարել են սոսկ կենդանի, ծանօթ մարդիկ լինելուց:

Իոսիֆ Ստալինը, օրինակ, կոթողական իր կերպարով հակադրութեան մէջ է ամենայն աստուածայինի ու մարդկայինի հետ. նա նիւթականացնում է չարի արարչագործութիւնը, նրա անյագուրդ մոլեռանդութիւնը՝ դժոխային իր ծրագրերն իրագործելու հարցում:

Ստալին երեսոյթը զբաղցրել է շատերին՝ անկախ մասնագիտութիւնից, տարիքից եւ ազգային պատկանելութիւնից: Մեր ուսումնասիրած գեղարուեստական եւ հրապարակախօսական երկերում տրում են Ստալին երեսոյթի ամենատարբեր մեկնաբանութիւններ, բացայայտում նրա անձի եւ գործի հետ կապուած բազմաբնոյթ հարցեր: Փիլիսոփայութեան դոկտոր Ալեքսանդր Յիպկօս գրել է. «*Տաւօթ, Սրպայինի գաղտնիքը մեռաւ նրա հետ: Մենք պարզապէս էլ չենք իմանայ, թէ ի՞նչ էր մտածում նա իրականում ինքն իր, կուսակցութեան, աշխարհի, այն սոցիալիզմի մասին, որ կառուցում էր:*

Ըստ երևոյթին դա էլ է կորուստ, քանի որ շար օգտակար կը լինէր իմանալ՝ ինչ էր մտածում նա այն պահերին, երբ մարդկանց, դասակարգերի եւ նոյնիսկ ժողովուրդների մահուան դատաւճիռներ էր արձակում:

Բախտի բերմամբ նրա ձեռքն ընկած յեղափոխութեան ամենազօրութիւնը վերջնականապէս այլասերեց նրան: Բայց այն ամէնում, ինչ նա անում էր, բողոք կար մարդկայինի դէմ:

Ի՞նչն էր նրան չարացրել:

Գո՛ւցէ դա միջակութեան ընդվզումն էր, վրիժառուօրին՝ իր բոլոր պակասութիւնների համար...»<sup>60</sup>:

Մահարին իր վիպակում վերացարկուել է ինքն իրենից, իր անձը վերածել գրական կերպարի: Այդ կերպարը կենսասիրութեան մարմնացում է: Չնայած կեանքի եղերական ընթացքին՝ նա չի դադարում սիրել կեանքը, անգամ կայանավայրերը, որոնց հետ կապուել է Բայրոնի Շիլլինի կայանաւորի նման: Նա իր մէջ ուժ է գտնում երագելու, տեսնելու-գնահատելու գեղեցիկը, մնալու կիրթ, վեհանձն, մերձաւորին սիրող ու սատարող անձնաւորութիւն: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ նա սոսկ պատմող է, դէպքերի շարադրող, բայց՝ ոչ: Մահարին ինքն էլ իր գրչի տակ դարձել է համամարդկային արժէքներ մարմնաւորող գրական հերոս, որը, այդուհանդերձ, չի թողնում ինքնագովութեամբ տարուած մարդու տպաւորութիւն:

Մենք Մահարի դատապարտեալի նման մարդկանց հանդիպում ենք ոչ միայն *Ճողկած Փշալարեր*ում կամ Մահարու սիբիրեան շարքի այլ գրուածքներում, այլեւ ուրիշ հայ եւ ոչ-հայ հեղինակների երկերում: Օրինակ՝ Մ. Արմէնի «Աագակի Երզը» պատմուածքի հերոս պրոֆեսոր Շեչենկօն՝ Մոսկուայի երաժշտանոցի նախկին դասախօսը, ստալինեան ճամբարներում ու բանտերում տառապող մտաւորական խափ տիպական ներկայացուցիչն է: Կեանքից ստացած ծանր հարուածները նրա մէջ չեն սպանել մարդուն, արուեստագէտին: Նա էութեամբ նոյն երաժիշտն է, ինչ-որ ազատութեան մէջ, պատրաստ անմնացորդ գոհաբերուելու բարձր արուեստին: Նոյն խմորից են հունցուած նաեւ մ. Արմէնի «Թռչունը» պատմուածքի հերոսները՝ թոջնաբան Ռուդնիցկին եւ պատմաբան, Մոսկուայի Համալսարանի նախկին պրոֆեսոր Կուդրեացիը: Այս մարդիկ եւս չեն դաաճանել ազատութեան մէջ դաւանած իրենց գաղափարներին: Մ. Արմէնը բացայայտել է աքտրեալ մտաւորականի մէջ պարփակուած երկակի մարդուն. դա մի կողմից ճակատագրի հարուածներից ընկճուած, դժուարին կենցաղից ու ծանր ֆիզիկական աշխատանքից հիւծուած աքտրեալն է, միա կողմից հոգու վեհութիւնը, մարդկային կիրթ ու ազնիւ նկարագիրը պահպանած մտաւորականը: *Պագրոփրեցին Յանձնել Ձեզ* ժողովածուի՝ վերը

յիշատակուած «Հին Տարուայ Գիշերը» պատմուածքի հերոս, քաղբանտարկեալ Իւան Ագատովը նոյնպէս մարդկանց այս շերտից է՝ բանաստեղծական հոգու տէր անձնատրուօթին, որը կարողանում է ամենագորշ ու մոայլ իրականութեան մէջ անգամ նկատել, գգալ գեղեցիկը. «Ոչ ոք չէր հիանում անտառով: Հիանում էր միայն Իւան Ագատովը: Նա նկարիչ էր»<sup>61</sup>:

Սրանք այն մարդիկ էին, որ մինչեւ կալանաւորուելը՝ ազատութեան մէջ, հասարակութեան սերուցքն էին եղել, կեանքի բնական ու բանական օրէնքների դասնողներն ու պաշտպանները: Եւ հենց այդ որակների պատճառով էլ դարձել էին թիրախ ժամանակի դահիճների համար: Ահա մի քաղուածք Վահրամ Ալազանի *Տառապանքի Ուղիներով* գրքից, որը նախանշում է Չարենցի անխուսափելի կործանումը:

*«...Մուղղուսին»<sup>62</sup> մի անգամ կանչում է Չարենցին եւ ասում. 'Դուք պէտք է մերկացնէք բանտարկուած գրողներին':*

*Չարենցը պատասխանում է. 'Չեմ ժխտում, որ ես նրանց իդէոլոգիական վոժդն»<sup>63</sup> եմ, թէ՛ նրանք եւ թէ՛ ես սխալներ ունեցել ենք, բայց քանի դեռ մի հայ գրող նստած է Չեկայի»<sup>64</sup> պաղտալում»<sup>65</sup>, դուք ինձանից նրանց մասին ոչ մի վստի խօսք չէք լսի: Ուզում էք՝ նրանց բոլորին ազատէք, կուլտուրայի փրկի դահիճում ընկերական դատ կազմակերպէք, ես էլ կը լինեմ հասարակական մեղադրող, առաջին հերթին ինձ կը մեղադրեն, որից յետոյ՝ նրանց: Ինչ է, դուք ուզում էք, որ ես դանո»<sup>66</sup> փրկի իմ բանտարկուած ընկերների փրայ':*

*Մուղղուսին վրդովուած ասում է. 'Ընկեր Չարենց, եթէ Դուք շարունակէք այդպէս խօսել, սպա Ձեզ դուրս կը թողնենք Կենտրոնական անդամների շարքից':*

*Չարենցը պատասխանում է. 'Ձեր Կենտրոնական գործադրիչ, ոչ թէ Չարենցի համար է պատիւ՝ լինել Կենտրոնական անդամ, այլ Կենտրոնական է պատիւ, որ Չարենցը իր անդամն է': Եւ գրպանից Կենտրոնական փոստը հանելով՝ փայխի է Մուղղուսին: Մուղղուսին նրան սպառնալով ասում է. 'Ընկեր Չարենց, եթէ Դուք Ձեզ այդպէս պահէք, մենք սպիտակում կը լինենք Ձեզ բանտարկել':*

*Չարենցը պատասխանում է. 'Պողումաեշ»<sup>67</sup>, վախեցրիք, էլի, հայ գրողի համար կայ՝ անելի պատուաւոր գործ, քան իր ժողովրդի համար բանտում մեռնելը: Միք մոռանայ, որ Նայբանդեանը արտորումն է մահացել':*

*(Իսեղծ Չարենց, երեւի գուշակում էր իր բանտային մահը)»<sup>68</sup>:*

Վերադառնանք, սակայն, Ծաղկած Փշալարերին:

Գեղարուեստական հնարքները, որոնցով Մահարին նկարագրում է կալանաւորների առօրեան, բազմաթիւ են: Դրանց մէջ առանձնանում է ճամբարային լատետների՝ 'դեղձանիկների' եւ յոռետեսների՝

'ագուաների' հակամարտության գիծը: Որքան բարոյօին, մարդասիրտօին, մահարիական լուսաւոր երգիծանք կայ այս պատմութիւնների մէջ: Սրանք սոսկ կենցաղային դրուագների, բախտակից մարդկանց բանավէճ-երկխօսութիւնների նկարագրութիւններ չեն, այլ չարի եւ բարու, ընկրկումի եւ յուսադրումի, մարդու եւ ոչ-մարդու հակադրութեան ցայտուն պատկերներ:

Շատ բնութագրական մի հատուած է գեղեցիկ ստու յորինելու եւ դրանով բախտակիցներին մխիթարելու Մահարու քայլը:

Իրայինների հոգեվիճակով մտահոգ Մահարի 'դեղձանիկը' յորինում եւ ստեղծագործում էր նաեւ մահուան ճամբարներում, յորինում եւ ստեղծագործում՝ առանց թուղթ ու թանաքի, առանց նիւթի գեղարուեստական կողմին ու տրամաբանութեանը հետամտաւ: Եւ ինչ էջ կարծում, ինչ էր յորինում: Երագներ: Գեղեցիկ ու լուսաւոր, սին ու պատիր երագներ:

*«Հակագդելու համար իմ հարեանների գէշ երագների վրայ՝ ես շարքաթուայ մէջ մի քանի անգամ սփռապատեմ եմ լինում ձի կամ աւանակ նստել:*

*- Աւանակն ի՞նչ գոյն ուներ,- հարցնում է դարաբաղցին:*

*Ես մտածում եմ, որ սեւ էջը դժուար թէ բարի նշան համարուի եւ ինձ նեպում եմ սպիտակ աւանակի կոնակին:*

*- Սպիտակ,- պատասխանում եմ ես:*

*- Սպիտակը պատանք է,- շնչում է դարաբաղցին եւ յորանջում:*

*Երկու օր յետոյ ես փոխադրում եմ սեւ էջի վրայ:*

*- Սեւը սուգի նշան է,- այս անգամ վայում է ճարտարապետը:*

*- Բայց երագում էջ կամ ձի նստելը լաւ նշան է,- բողբոջում եմ ես:*

*- Կ'սպրենք, կը տեսնենք,- գիջում է դարաբաղցին:*

*- Ինչ երագ ուզում ես տես, մեզ վրայ սեւ խաչ են քաշել,- մտքերի փոխանակութիւնն ամփոփում է ճարտարապետը»<sup>69</sup>:*

Կալանատրոներին այս սկզբունքով դասակարգելու փորձ արել են նաեւ այլ հեղինակներ: Ղազարեանը, օրինակ, իր հերոսներին բաժանում է երկու խմբի՝ լաւատեսների եւ իրատեսների: Վերջիններս, թէեւ հեղինակի կողմից չեն յորջորջում յոռետեսներ, այդուհանդերձ լաւատես չեն, քանի որ իրենց ապրած կեանքը հիմք չէր տալիս լաւատեսութեան: Կալանատրոների մէջ քիչ չէին այնպիսիք, որ բանտերում տարիներով տառապելուց յետոյ էլ չէին ուզում հաւատալ իրենց հետ կատարուածի անխուսափելիութեանը եւ, համարելով այդ ամէնը սոսկ թիւրիմացութիւն, պատահական սխալ, շարունակում էին նամակներ ու դիմումներ գրել պատկան մարմիններին՝ իրենց գործը վերանայելու խնդրանքով: Աւելի սառը դատողներն ու իրերին, երեսոյթներին սթափ հայեացքով նայողները, մինչդեռ, համոզուած էին, որ ամէն ինչ

սահմանում է եղել վերելից, որ իրենք ոչ թե պատահական զոհեր են, այլ իրենց մաքրութեամբ ու ազնուութեամբ ստալինեան մարդատեաց ծրագրերին ու նպատակներին խոչընդոտող տարրեր, դրա համար էլ դեռ երկար պետք է սպասեն, մինչեւ որ բացայայտով ճշմարտութիւնը, բայց որ այն անպայման կը բացայայտուի, նրանք չէին կասկածում:

Այս վստահութեամբ էր ապրում նաեւ Մահարու վիպակի գլխավոր հերոսներից մէկը՝ Աշոտ դային:

Վիպակում կարեւոր տեղ է յատկացուած այս կերպարին:

Աշոտ դային ժողովրդի ծոցից ելած, անխարդախ, բարի մի ծերունի է, որի կերպարում խտացում է մեր հայրերի ու նախապապերի կենսահաստատ իմաստնութիւնը: Բրուտանոցի աագն է նա, որ փորձառու աչքով բրուտանոցի աշխատանքներին հետեւելուց գատ նաեւ հայրական հոգածութեամբ մխիթարում-սատարում է իր թշուառ բախտակիցներին: Ազնի ու շիտակ այս ծերունին, եթէ հարկ է, կարող է նաեւ ստել՝ յանուն մերձաւորների բարօրութեան:

Ահա նրա խորհրդածումների ընթացքը. «*Ինչո՞ւ այսպէս եղաւ, այս ի՞նչ զարմանալի պարմութիւն է... Արդար կարգերի երկրում այսքան կայանատ՞ր... սա մի մեծ բամբասանք է, մի մեծ զրպարտութիւն: Անմեղ, անշատ ու պէտքական, շար պէտքական մարդկանցով են լցրել բանփերն ու լազէրները<sup>70</sup>: Ո՞ւմ է հարկատու, ինչո՞ւ է այս մեծ անարդարութիւնը: Երեւի կայ մէկը, որին ձեռնպուռ չեն ազնիւ, շիպակ, համարձակ մարդիկ եւ նրա հրամանով այդպիսիներին ոչնչացնում են...<sup>71</sup>:*

Եւ պատահական է, որ Մահարին այսպիսի խորիմաստ դատողութիւնների կենտրոնում կանգնեցրել է ոչ թէ որեւէ փիլիսոփայի, որեւէ պրոֆեսորի, որեւէ անուանի արուեստագէտի, ինչպիսիք շա՛տ-շատ էին ստալինեան պատժարաններում, այլ յատկապէս շարքային հայ մարդուն, սովորական շինականին: Հասկանալի է, որ այս կերպարը, իրական նախատիպից ծնուած լինելով հանդերձ, խորհրդանիշ էր, կրում էր գաղափարական ենթիմաստ: Ահա Աշոտ դայու մէկ այլ դիտարկում, որ ասուածն է հաստատում. «- ...*Հիանդ արդարութեան կենացը խմենք, ծանր է նրա դրութիւնը, բայց նա չի մեռնի: Երբ հիանդ է արդարութիւնը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դատնում երկերեսանի, չար, եսամոլ, սպորաքարշ: Նրանք քծնում են, լիզում իրենց ուրնակոխող սապոզները, ասում են խօսքեր, որոնք իրենցը չեն, կապարում են գործեր, որոնց հետ համաձայն չեն, բայց կապարում են, որովհետեւ արդարութիւնը հիանդ է, չի կարող նրանց կարգի բերել:*

- ...*Հին է ու միշտ նոր չարի ու բարու կոխը, եւ միշտ բարին է յաղթանակել: Խմենք այն մեծ օրոայ կենացը, երբ վերջին բանփարկեալը կը թողնի վերջին բանփը: Թող բանփորի փռը դպրոցներ*

շինեն ու ճամբարների գրասած լայնածալ հողերը ցորենի արտեր դառնան»<sup>72</sup>:

Այս հաւառը հաստատում է նաեւ Ղազարեանի տողը. «Ճամարտութիւնը չի կարող մամլիչի փակ երկար մնալ»<sup>73</sup>:

Վիպական շարադրանքում Աշոտ դայու հետ ունեցած շփումների նկարագրութիւններում ամբողջանում, լիաժեք է դառնում նաեւ Մահարու կերպարը:

Ահա մի երկխօսութիւն՝ տանջալի օրն աւարտած ու բարաքի չոր տախտակների վրայ քնել պատրաստուող Մահարու եւ Աշոտ դայու միջեւ:

«- Ինչո՞ւ կալանաւորներին չի թոյլատրուում ժամացոյց պահել:

- Որպէսզի չկարողանան ժամադրութիւն նշանակել,- պատրաստանում եմ ես:

- Երեւի՛, երեւի՛,- պատրաստանում է նա: Յետոյ անդրադառնում է:- ժամադրութիւն՝ ո՞ւմ հեք...

- Ամէն կալանաւոր ունի իր սիրուհին,- ասում եմ ես,- եւ զարմանալի կերպով բոլոր կալանաւորների սիրուհիները մի անուն ունեն:

- Ջարմանալի բան,- նկատում է Աշոտ դային եւ ուզում է երեւի զարմանալ, բայց ես զգում եմ, որ նրա մտքերը հեռու են,- եւ ինչպէ՛ս են կոչում նրանք,- այնտամենայնիւ հարցնում է նա:

- Ազգաբնակչութիւն,- ասում եմ ես մեծ հանդիսատրութեամբ:

- Տեղը բերիք,- երեւի ժպտում է նա խաւարում,- բայց գիշերուայ համար շար է դժուարամարս»<sup>74</sup>:

Նաեւ բրուտանոցի միա բանուորներն են Մահարու խուզարկու հայեացքի ներքոյ. Մամօն, Լիւմիլա Շարթը, Իոնասը: Սրանց հետ յարաբերութիւններում ձեւատրում-ամբողջանում է վերահսկիչ Բիչկոյի կերպարը:

Մահարին փոքրածալ գրական երկում կարողացել է աւարտուն նկարագիր հաղորդել իր գլխատր հերոսներին: Յաճախ դա նրան յաջողուել է անել մէկ-երկու նախադասութեան միջոցով, մէկ երկու ուրուագծի միջոցով:

Օրինակ՝ Լիւմիլա Շարթի ողբերգութեան ցնցող պատկերն ամփոփում է այս տողերում. «Ես չեմ կարող ձեզ պատմել այն, ինչ ինձ հեք արին... դա փղամարդուն պատմելու բան չէ, եւ, ընդհանրապէս, հարազատ քրոջս անգամ չեմ պատմի»<sup>75</sup>:

Շարթը եզակի չէ իր ճակատագրով: Նրա բախտակից երկուորեակն է Ղազարեանի յուշապատումի հերոսուհի Էլլին՝ Վլադիմիրի<sup>76</sup> բանտի կալանաւորը: Եթէ Շարթը խուսափում է մանրամասն պատմել իր հետ կատարածի մասին, ապա Էլլիի շուրթերով մեզ մասամբ հասու է դառնում կին կալանաւորներին վիճակուած ստորացումների

հրեշաuroոպօինը. «Հսկիչների մէջ կան այնպիսիները, որոնք այք չեն հեռացնում կանանցից հանուելու եւ լողանալու ժամանակ: Դա նրանց հաճոյք է պատճառում: Անամօթ անատուններ: Բայց կան նաեւ այնպիսիք, որոնք ամաչում են, շփոթում, երեսները դարձնում, աշխատում են չնայել, մինչեւ անգամ հեռանում են: Առհասարակ մեզ՝ կանանց, անլի շատ են ծաղր ու ծանակի ենթարկում, քան տղամարդկանց»<sup>77</sup>:

Շարթի եւ Բիչկոյի փոխշփումների միջոցով Մահարին ի ցոյց է դնում այն ճշմարտութիւնը, որ բոլշեփկեան, յեղափոխական գաղափարախօսութեան ալիքը քննադատաբար, մարքսիզմի լոյսի ներքոյ վերագնահատում է համաշխարհային արժէքները՝ դրանք վերածելով անհեթեթութեան:

Բայց որպէսզի ցոյց տայ, թէ ինչպէս կարող է մարդը մարդ մնալ, չկորցնել արժանապատուփիւնն ու հպարտութիւնը ամենաստորացուցիչ հանգամանքներում անգամ, Մահարին պատկերում է հացի յաւելեալ օրապահիկի դիմաց Ստալինի գլխաքանդակն անել առաջարկող Բիչկոյին Լիտմիլայի տուած մերժում-պատասխանը. «Ժողովրդի թշնամիների ուրների տակ հունցուած կաւից, լրտեսի մատներով- դա բարդ գործ է, կապուած բարդութիւնների հետ»<sup>78</sup>: Ահա՛ այսպէս: Եւ արժէ՛ այլեւս զարմանալ, որ այսպիսի կնոջ հետ սեռական-պարտիզանութեամբ զբաղուող գծում, մորթապաշտ, սեփական ստամոքսի պահանջներին յագուող տալուց բացի որեւէ այլ արժէք չհանաչող կառապան Մամօն, նա, որ «գոնգից առաջ էր յում»<sup>79</sup> ճաշի կանչող ծայնը, կերպարանափոխում, վերամարմնատրում է բոլորի աջքի առաջ, դառնում բոլորովին ուրիշ մարդ՝ այս կնոջ յայտնութիւնից յետոյ: Եւ կրկին Մահարու հակիրճ ու սպառիչ դիտարկմանը դիմենք. «Ես գիտէի (օ՛...) ես գիտէի, որ սէրը փոքրատառ մարդուն դարձնում է մեծատառ, բայց այսքա՛ն մեծատառ: Ծիշտ, ճիշտ, ես այդ չէի սպասում: Ես այդ չէի սպասում»<sup>80</sup>:

Ահա եւ մէկ այլ ուսեալ 'ոճրագործ'՝ Վիլնիսի Պետական Համալսարանի Իրաւաբանական Ֆակուլտէտի նախկին ուսանող Իոնասը, որին ստալինեան գեհենը իրաւաբանից վերածել է յոռետեսութեամբ համակուած բանաստեղծի. «Կէս գիշեր է, բայց արաղաղներն անգամ գիտեն, որ լուսաբացը հեռու չէ: Իսկ ես մարդ տեղովս յուսահատուել եմ...»<sup>81</sup>:

Կան եւ կարեւոր գործառոյթ իրականացնող երկրորդական կերպարներ, որոնք իրենց համառօտ ներկայութեամբ ու վիպական գործողութիւններին հպանցիկ մասնակցութեամբ ասես լրացնում են գլխատր կերպարների նկարագիրն ու վիպակի սիւժետային, գաղափարական կողմը: Վիպակին առանձնայատուկ շունչ ու

կենսունակության են հաղորդում Բիչկոյի, խոհարար Մետրոպի, թիֆլիսահայ Չինգաեի, կրճիս-դարիմանցի<sup>62</sup> դատապարտեալ գեղջուկի ու նրա «համեմատական երջանկության տեսության» հետ կապում պատմությունները, ճամբարային սիրավէպերի՝ իրենց տեսական բացահիկ դրուագները: Յիշատակության են արժանի Սոլոմոն Գալրիլովիչի, հայ ճարտարապետերի, Բելուգովի, գնչու Կոլիայի կերպարներն ու դրանց առնչուող հատուածները:

Մահարու գրականությանը ԺԹ. դարավերջին եւ Ի.ի սկզբին հայ մարդուն բաժին հասած բոլոր ողբերգական-բեկումնային անցքերի գեղարուեստական հասաստագիրն է: Նա չի շրջանցել որեւէ պատուհաս, որը վիճակուած է եղել ապրել իր հայրենիքին ու ազգին: Բայց իբրեւ գրականության նիւթ ունենալով ամենադաժան ու յուսահատական թեմաները՝ չի դարձել լալկան, չի տրուել ողբասացության, այլ ստեղծել է պայծառ, լուսատուր գրականության, որի իրաքանչիւր տողում ու տողատակում նրա անմար ժպիտն է, կենսունակ երգիղանքը, ծիծաղը՝ արցունքի միջից: Նա իր քնարական, հիպոթեզ լեզուով, ոճական ինքնօրինակ հնարներով գրականության է կերտել ամենակենցաղային, ամենաոչ-գրական իրողութիւններից անգամ: Նրա հայեացքից չի վրիպել ոչ մի մանրուք, եւ մանրուքներից իւրաքանչիւրը նրա համար դարձել է գեղարուեստ ստեղծելու հումք, ատաղծ: Ամենագոհիկն անգամ նա ներկայացրել է սուր, խայթող, բայց ոչ երբեք թունտ երգիծանքով, *գորտեսկի* հասնող նկարագրութիւններում անգամ մնացել է կիրթ ու նրբանկատ:

Յիշենք, օրինակ, բանտասենեակում փակուած քսանեակի քարտուղարի ընտրության, համեմատական երջանկության տեսության, հիւանդ արդարության, հումանիզմի վերաբերեալ դիտարկումները: Ահա Երեանի բանտից Վոլոգայի<sup>63</sup> բանտ տեղափոխուող կալանատուր Մահարու ներքին մենախօսութիւնը. «Մեզ չեն գնդակահարում, մեզ փանում են հիւսիս, արքոր: Կեցցէ մարդասիրութիւնը, կամ այն միւս բառով ասած՝ հո՛ւմ... հո՛ւմ... հումանիզմը: Շնորհակալութիւն, շնորհակալութիւն հոգափարության համար: Հո՛ւմ-հո՛ւմ-հումանիզմի՛ համար»<sup>64</sup>:

Մահարու համար չկայ որեւէ մանրուք, որ արժանի չլինի ուշադրութեան: Ինչպէս է նա նկարագրում արտաքնոցը, Տայգայում տիրող լռութիւնն ու այն ճեղքող թռչնի կոհնչը, բանտահտը:

Իսկ ինչպիսի պատկերատրաման է նա հասնում մէկ հատիկ բառի միջոցով, եւ այդ բառն իրենն է բացառապէս, այն այդպիսի գործառոյթով չի հանդիպել մէկ այլ գրողի մօտ. օրինակ՝ Մամոյի լացող բեղերը՝, Իոնասի 'դժուար ռուներէնը', 'բարակ ժպիտը', 'ժպտուն ծայնը', Լիւմիլայի 'կալանատրական նիհարութիւնը', 'սրտառուչ, հոգեցունց,

ընդամենը՝ կովի բառաչը՝ քնած կալանատուրների՝ 'բազմերանգ', 'թերահաւատ', 'տարակուսող' ժպիտները, Վուրգդայի<sup>85</sup> բանտի 'հիւրընկալ ճիրանները', բանտային վերակացուի 'գրեթէ մարդկային ծայրը' են.:

Մէկ հատիկ համեմատութեամբ մի ողջ երեսոյթ է բացայայտում Մահարին. «*Նրա (կալանատրի - Կ.Ռ.) համար կինն այն էր, ինչ աշխատող չարքաշ եզի համար Չայկովսկու Երրորդ սիմֆոնիան*»<sup>86</sup>:

Եւ կրկին դիմենք Մ. Արմէնի պատմուածաշարին, որպէսզի մէկ այլ հասատիպցում եւս ունենանք Մահարու դատողութեան համար: «Բարոն» պատմուածքն այլաբանութիւն է: Բարոնը՝ ճամբարի պետի ծին, մարմնատրում է ժամանակի տէրերի աշխարհը, նրանց կենցաղն ու հոգեբանութիւնը, ճամբարում աշխատող ձիերը՝ դժբախտ արտորեսալներինը: Կենքի վայելքները վաղուց մոռացած ճամբարի սովալլուկ ձիերի եւ իր պարարտ մարմնում խլրտացող սրուած բնազդերին բաւարարում փնտռող Բարոնի հակադրութեամբ Մ. Արմէնն ստեղծել է ժամանակի մարդկային հասարակութեան երկփեղկածութեան խօսուն պատկերը եւ իւրովի կրկնել Մահարու վերը մէջքերուած խօսքը:

Միշտ չէ, որ Մահարին հետամուտ է ժպիտի ու լատետեսութեան գերակայութեանը: Երբ հասնում է սահմակեցուցիչ փաստն արձանագրելու պահը, Մահարու կատակող գրիչը շամփրում է անօրինակ դաժանութեամբ: Ըծերեւ, բազմաթիւ այրալիսի հատուածներից մէջքերենք ամենատուկային. «*Թող գայ այն օրը, երբ քաղաքների հրապարակներից եւ մեծ ու փոքր կայարաններից կը վերանան ժողովուրդների երկրային, սանձարձակ <օր մեծ ու փոքր արձանները: Սակայն հուր-յափտեան թող կանգնած մնայ այն արձանը, որի սրբեղծումը եւ տեսայ եւ որը հիմա էլ կանգնած է սառցէ ողններով իմ սրտի վրայ, իմ սրտի վրայ: Այդ պատահեց բեւեռում, յափտեանական սառոյցների դաժան գօտրում: Մահուան ճամբարից դուրս, ճամբարից տեսանելի սառցէ մի բարձրութեան վրայ կանգնեցրին երկրասարդ կալանատրին, դոյլերով ջուր կրել տուին եւ ողողեցին նրան: Ջուրն արագ սառեց, եւ բարձրութեան վրայ կանգնած մնաց մարդկային ձեւերով սառցէ մի յուշարձան: Մահացած եւ մահացող միջոնատր կալանատրների յիշատակը յաներժացնող միակ յուշարձանն է դա: Թող յաներժ կանգուն մնայ այդ սարսափելի յուշարձանը: Մահացածների սառած ճիչն էր դա, որ սերունդները լսեն նրանց ծայրը, յիշեն, չմոռանան, յիշեն ու թոյլ չտան, որ կրկնուի ահատր պատմութիւնը*»<sup>87</sup>: Այո՛, այս պատկերի դէմ անգամ Մահարու երգիծանքն է վայր դնում զէնքերը: Սա արդէն իրականութեան իրական դէմքն է, որի զագրելիութիւնն անխնայ ի ցոյց է դնում ոչ թէ երգիծաբան, ոչ թէ

ռամանտիկ, ոչ թե հոգեբան-փիլիսոփայ, այլ արդեն դաժան լինելու աստիճան իրատես Մահարին:

Ճշմարտության անաչառ մեկնիչը լինելու համար բաարար չէ միայն տաղանդը: Դրա համար պետք է ունենալ նաեւ Մահարու քաղաքացիական, մարդկային խիզախությունը, մի բան, որ շատ ուրիշ գրողների մօտ բաարար չեղաւ, ու նրանք մեզ ժառանգեցին կիսաճշմարտությունը բարբառող, վախի ու կեղծիքի նստուածքը յարթահարած ստեղծագործություններ: Օրինակ՝ կարելի՞ է հաատալ Մ. Արմէնի անկեղծութեանը, երբ *ժիրայր Գլենց* վէպի առաջաբանում գրում է. «Իմ վէպում հերոսը վերադարձել է կալանքից: Բայց, հիմնական գաղափարի տեսակէտից, դա ոչ-էական մանրամասնություն է: Հիմնական գաղափարը մեր հասարակութեան կենսունակությունն է եւ շեշտը դրուած է դրա վրայ: Եւ ահա, հենց դա է, որ ես անուանեցի եւ իրաքանչիւր որ կ'անտանի մեր յեղափոխութեան կարեւորագոյն նուաճումներից մէկը»<sup>88</sup>: Սա հաատստի ապացոյցն է այն բանի, որ 1960ականներին ու դրանից դեռ շատ աւելի ուշ էլ չէր յարթահարուել հետապնդուելու, դատապարտուելու, սպանուելու վախը խորհրդային մարդու մէջ: Առհասարակ, Մ. Արմէնի *ժիրայր Գլենց* վէպը հեղեղուած է սոցիալիզմի եւ կոմունիզմի 'քարձր' գաղափարները քարոզող մտքերով, որոնք կարծես պատահականօրէն յայտնուում են այս կամ այն հերոսի խօսքում՝ ստեղծելով մտքի աղճատուածություն, շարադրանքը զրկելով սահուն, բնական ընթացքից: Այդպիսի հատուածներն ակնյայտօրէն չեն բխում բաժրացուած խնդրի բուն էութիւնից, դրանք ասես անյաջող կարկատաններ լինեն, որոնք ոչ թէ նպաստում են շարադրանքի ամբողջացմանը, այլ ընդհակառակը՝ անհարկի ու աւելորդ են հնչում: Նման երեւոյթի առաւել շատ ենք հանդիպում ստալինեան քստորավայրերում իր կեանքի մի հատուածն ապրած մէկ այլ գրողի՝ Վալտեր Արամեանի ստեղծագործություններում, որոնք տեղ են գտել *Տայգայի Օրէնքը* (Երեւան, Հայպետհրատ, 1955), *Մարդու Սէրը* (Երեւան, Հայպետհրատ, 1962), *Արահեպներ* (Երեւան, Հայպետհրատ, 1977), *Վերադարձ* (Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1983) գրքերում:

Այդ տարիներին խորհրդային բռնապետութեան սահմաններում մոլեգնում էին վախը, կեղծիքը, արիւնահեղութիւնն ու հալածանքը, եւ մակերեսային ու թոյլ գրական արձագանգներն աւելի շատ խաթարում, քան արտացոլում էին այն օրերի իրականութիւնը:

Եւ գրողներն իրենք էլ լաագոյնս գիտակցում էին այս ճշմարտութիւնը. այդ էր պատճառը, որ եթէ իրականութեան մասին ուղղակի ինչ-որ բան ասելու հնարատրութիւն կամ համարձակութիւն չէին ունենում, իրենց խօսքը փոխանցելու զարտուղի, այլընտրանքային միջոցների էին դիմում: Այսպէս, Վալտեր Արամեանը գտաւ իր խօսքի

ճանապարհը՝ բուն ասելիքը տեղ հասցնելով առերևոյթ անկարելի թուացող, իբրեւ աղանդաւոր ներկայացուած ցնորամիտ մի կերպարի շուրթերով: Ահա թէ ինչ էր բարբառում «Ճակատամարտ Բոյունդայի»<sup>89</sup> Ափերին» պատմուածքի այդ հերոսը՝ աղանդաւոր Դոսէիկը. «Մի երկիր է եղել,- պատմում էր նա,- հեռաւոր մի երկիր, որպէջ մարդիկ մեզ նման են եղել, երկրորդանի, միգլխանի, թոքեր եւ աղիներ են ունեցել, ամէն ինչ՝ բացի հոգուց: Այդ երկրի մարդկանց հոգին են հանել աստուածները, եւ, որովհետեւ, բնութիւնը դաբարկութիւն չի սիրում, հոգու փեղը կասկած են դրել եւ անհասարկութիւն: Նրանք ոչնչի այլեւ չէին հասարկում: Սիրոյ մէջ պարտաւոր էին արեւութիւն փեսնել, հարազատութեան մէջ՝ դաւաճանութիւն, մտերմութեան մէջ՝ դաւադրութիւն: Թէ ինչպէս էին ապրում այս երկրի մարդիկ այսքանից յետոյ՝ չգիտեմ: Բայց ապրում էին: Եթէ մարդն այդպէս կարող էր ապրել մարդկանց շրջանում, փայտայտում, գազանների հետ անելի հեշտ կ'ապրի, որովհետեւ գազանը մարդուց փարբերում է նրանով, որ բնագոյով է անում ամէն ինչ, իսկ մարդը՝ խելքով, երբեմն մարդուն սփիպում են անել այն, ինչ ինքը չի ուզում անել: Մարդուն խանգարում է խելքը, եղբայրներ: Երջանիկ է նա, ում աստուած խելքի փոխարէն հասար է սէր է փունել մերձատրի եւ օտարի նկատմամբ: Գազանին ազատ բնութեան մէջ սփիպել չես կարող: Նա ազատ է, իսկ ազատութիւնը բնական է, այն ինչ որ բնական է, ազատ է»<sup>90</sup>:

Այս պայմաններում էր Դերենիկ Դեմիրճեանը գրառում իր դատողութիւնները Ղարաբաղի, Նախիջեանի եւ Ախալքալաքի ճակատագրի վերաբերեալ: Եւ նա նոյնպէս զերծ չմնաց խորհրդային կարգերը փառաբանելու ժամանակի հրամայականից, որքան էլ որ նոյն այդ ժամանակի համար գրեց անթոյլատրելիօրէն համարձակ մտքեր: Եւ որովհետեւ իսկական մտաւորականը չի կարող երկար թաքցնել իրեն յայտնի ճշմարտութիւնը (թէկուզ եւ՝ վտանգատր ճշմարտութիւնը), ուստի Մ. Արմէնն էլ *Ժիրայր Գլենց* վէպում իր ապրած ժամանակի մասին տեղ գտած թերաստութիւնները ժխտում է Պարփոհրեցին *Յանձնել Ձեզ* ժողովածուով:

Իսկապէս, հալածանքն ու բռնութիւնը խորհրդային մարդու նկատմամբ շարունակում էին նաեւ 37ից ու Բ. Աշխարհամարտից յետոյ, սակայն փոխուել էր այդ մարդու հոգեբանութիւնը: Խորհրդային հասարակութիւնն այլեւ կեանքին վարդագոյն ակնոցով՝ նայող, դիւրահասատ ու անգիտակից ամբոխ չէր, այլ 37 թիւ ու պատերազմ տեսած, արիւնահեղութիւն ու սով տեսած, յետպատերազմական շրջանում կրկնակի արքոր տեսած մի մոայլ ու տառապեալ զանգուած, որ այլեւ չի հասատում իր երջանկութեան ու անձեռնմխելիութեան առասպել:

30ականների մղձաւանջի արտացոլումներին հանդիպում ենք նաեւ անելի ուշ շրջանի գրական երկերում, այնպիսի հեղինակների ստեղծագործութիւններում, ինչպիսիք էին Յովհաննէս Շիրազը, Հրաչեայ Քոչարը, Լեւ Կամսարը, Անահիտ Սահինեանը, Զորայր Խալափեանը, Վարդգէս Պետրոսեանը, Պարոյր Սեակը, Հրանտ Մաթետոսեանը, այլը:

Եւ ոչ-պակաս կարեւոր ենք համարում վկայակոչել այն հանգամանքը, որ հայ գրողների մէջ քիչ չեն եղել այնպիսիք, որոնք ստալինեան բռնաճնշումների ու երեսնականների խորհրդային մարդու, ի մասնաւորի՝ հայի ողբերգութեան անդրադառնալու բնական մղումը ստիպուած են եղել խեղդել իրենց մէջ ու լուռ տառապել՝ ատամները սեղմած: Այդպիսիք կ'ամ չգրեցին ոչինչ, կ'ամ գրեցին ու թաքցրին անմատչելի գրողներում: Վերջիններից ոմանց ժպտաց բախտը տասնամեակներ անց, քանզի գրի ու գրականութեան պրպտող մշակները յայտնաբերեցին թաքնուած յիշատակարաններն ու հանրութեան դատին յանձնեցին դրանք: Այդպիսի մի ցայտուն օրինակ է վերելում յիշատակուած՝ Դեմիրճեանի «Դատողութիւններ Ղարաբաղի եւ Նախիջեանի Հարցի Շուրջ» խոհագրութիւնը, որում տեղ գտած դառը խորհրդածումները եւ արձագանգ են երեսնականների ստալինեան դժոխքի: «*Անդրկովկասի, անելի ճիշտ՝ Կովկասի սովետական սոցիալիստական գործին մեծ հարուած է տրուած Բերիայի<sup>91</sup> եւ Բազիրովի<sup>92</sup> դաւաճանական գործունէութեամբ*»<sup>93</sup>, - կարդում ենք յիշեալ ձեռագրում: Ստալինի դիւային ծրագրերի գերագոյն իրագործողի՝ Բերիայի անունը յիշատակելուց զատ՝ Դեմիրճեանն իր դատողութիւնների ամփոփիչ մասում առաւել լայն հայեացք է նետում ստալինեան իշխանութեան տարիները նո՛ր-նոր թօթափած, բայց իր նկարագրով դեռեւս խեղուած խորհրդահայ իրականութեան վրայ՝ նկատելով. «*Առհասարակ չգրուած մի օրէնք է դարձել, չպայմանաւորուած համաձայնութիւն միշտ հայերի պատրիոքիզմը*»<sup>94</sup> դարձնել մեղադրանք՝ նացիոնալիզմ<sup>95</sup>:

Հայ կոլպտուրայի որեւէ երեսույթը նշելը, վեր հանելը, հայ ժողովրդի որեւէ պատմական կամ ներկայի առաւելութիւնը, հայերէն խօսելու ցանկութիւնը եւ այլն որակուել է որպէս նացիոնալիզմ:

Ոչ մի լեւինեան դրոյթ, որ հայ ժողովրդի **համար եւս գոյութիւն ունի կարծես. հայերի դէպքում նացիոնալիզմ է: Ղարաբաղի պահանջը, Նախիջեանի պահանջը, Ախալքալաքի համար որեւէ դրութեան պահանջը միշտ համարուել է նացիոնալիզմ**<sup>96</sup>:

Այս բռնադատուած սերնդի համահաւաք նկարագիրն է բովանդակում Մարո Մարգարեանի «Իմ Սերունդն Ամբողջ Եղեամի Մէջ է» բանաստեղծութիւնը, որով եւ ցանկանում ենք ամփոփել մեր ուսումնասիրութիւնը.

Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է.  
 Նշանակում է ցրտեր են եղել.  
 Ծածկուել են ծինով ժամանակից շուր,  
 Բայց կրակն իրենց դեռ չեն անթելել.  
 Նրանք պարզապէս կարճ ժամանակում  
 Անցել են երկար, երկար ճանապարհ՝  
 Սերմնացաններ, որ հողի փոխարէն,  
 Հերկել են սառոյց, ակօսել են քար.  
 Եւ հոգիներում գանձեր ու գանձեր,  
 Որ դեռ չեն պեղել.  
 Իմ սերունդն ամբողջ եղեամի մէջ է,  
 Նշանակում է ցրտեր են եղել<sup>97</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Georg Hegel, *Estetika* (գեղագիտություն), Հտր. 1, Մոսկուա, Iskusstvo, 1968, էջ 52: (Այս եւ ուսալեզու աղբիւրներից յետագայ մէջբերումները ներկայացում են մեր թարգմանութեամբ - Կ.Ռ.):
- <sup>2</sup> Ալեքսանդր Սոլժենիցին, «Նորելեան Դասախօսություն», *Noviy Mir* ամսագիր, 1989, թիւ 7, էջ 141:
- <sup>3</sup> Դաւիթ Գասպարեան, *Գուրգէն Մահարի*, Երեւան, Զանգակ Հրատ., 2013, էջ 323:
- <sup>4</sup> Խաչիկ Հրաչեան, «Երեսնականին», *Նորք Ամսագիր*, 1990, թիւ 7, էջ 155:
- <sup>5</sup> *Իրարես de facto* թերթ, թիւ 17 (598), 13-16 Մարտի, 2015, էջ 16:
- <sup>6</sup> Ահաբեկիչ:
- <sup>7</sup> Լեւ Տրոնկին Խորհրդային Միութեան կուսակցական եւ պետական գործիչ էր, Իոսիֆ Ստալինի գաղափարական հակառակորդը: Նրա գաղափարներին յարողներին սպառնում էր դաժան ճակատագիր ստալինեան բռնութիւնների շրջանում:
- <sup>8</sup> Դաւիթ Գասպարեան, *Ողբերգական Չարնցը*, Երեւան, Նայիրի Հրատ., 1990, էջ 93:
- <sup>9</sup> Kolossal ոռսերէն եզրոյթ է, որ նշանակում է հսկայական կորոզ, արձան:
- <sup>10</sup> Կատակլիզմը կտրուկ կործանարար շրջադարձն է բնութեան մէջ կամ մարդկութեան կեանքում:
- <sup>11</sup> Չարենցի յիշատակած չորս գահակալները Ռուսաստանում իշխել են տարբեր ժամանակաշրջաններում. Իւան Ահեղ՝ 1547-1584, Պետրոս Մեծ՝ 1682-1725, Նիկոլայ Ա.՝ 1825-1855, Նիկոլայ Բ.՝ 1894-1917:
- <sup>12</sup> Արքայական ծիրանի կրող, ծիրանակիր:
- <sup>13</sup> ԳԱԹ (Գրականութեան Եւ Արուեստի Թանգարան), Չարենցի Ֆոնդ, թիւ 118:
- <sup>14</sup> Անդրէյ Տուարրովսկի, *По Праву Памяти* (Յիշողութեան իրատուքով), *Noviy Mir*, 1987, թիւ 3, էջ 196:
- <sup>15</sup> Ռուսատառ յապատում, որ նշանակում է քաղաքական գլխատր վարչութիւն:

- <sup>16</sup> Ժողովուրդն այսպէս էր կոչում այն մեքենաները, որոնցով մարդկանց ձերբակալելու էին գալիս խորհրդային պետականագութեան աշխատակիցները:
- <sup>17</sup> Տե՛ս՝ ծան. 15:
- <sup>18</sup> Ռուսատու յապաւում, որ նշանակում է Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատ:
- <sup>19</sup> Ալեքսանդր Սոլժենիցին, «Գուլագ Արխիպելագը», *Գարուն* ամսագիր, 1990, թիւ 1, էջ 69:
- <sup>20</sup> Մկրտիչ Արմէն, *Պարուիրեցին Յանձնել Ձեզ*, Երեւան, Հայպետհրատ, 1964, էջ 68: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
- <sup>21</sup> Նոյն, էջ 74:
- <sup>22</sup> Եուզ Ալեշկովսկի (ծն. 1929) ստալինեան բռնութիւնների ենթարկուած ոռւ գրող, երգահան:
- <sup>23</sup> Գուրգէն Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 105-106: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
- <sup>24</sup> Նոյն, էջ 4:
- <sup>25</sup> Նոյն, էջ 4:
- <sup>26</sup> Նորայր Աղալեան, *Ազգութեան Սրբկութիւնը*, Երեւան, Վան Արեան Հրատ., 2014, էջ 81:
- <sup>27</sup> *Ժարգոնային* ձեւ է՝ կազմուած ոռւսերէն յսիկ բառից, որ նշանակում է մանր գող, խաբեբայ, զեղծարար:
- <sup>28</sup> Մկրտիչ Արմէն, *Պարուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 130:
- <sup>29</sup> Աքասթումանը Վրաստանի վարչական տարածքում գտնուող ասանտիպ քաղաք է:
- <sup>30</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 61:
- <sup>31</sup> Ռուսերէն *dujina* (տասներկու միատր ներառող խումբ) եւ *gorod* (քաղաք) բառերից կազմուած եզրոյթ է:
- <sup>32</sup> Վոլոգդան ոռւսական քաղաք է:
- <sup>33</sup> Աղալեան, էջ 67: Մետրոպ Ուզունեանի բարբառով 'ուտուշ', 'խմուշ', 'սիրուշ', 'մափուս' բառերը համապատասխանաբար նշանակում են ուտել, խմել, սիրել, բանտ:
- <sup>34</sup> Տե՛ս՝ ծան. 6:
- <sup>35</sup> Տե՛ս՝ ծան. 7:
- <sup>36</sup> Աղալեան, էջ 114:
- <sup>37</sup> Նոյն, էջ 137-138:
- <sup>38</sup> Միխայիլ Բուլգակով, *Վարպեւրը եւ Մարգարիտան*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1985, էջ 324:
- <sup>39</sup> Անատոլի Ռիբակով, *Արբարի Ջաակները*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 594:
- <sup>40</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 31:
- <sup>41</sup> Իռսիֆ Ստալինի յայտնի խօսքն է. «Մարդն ամենաթանկ կապիտալն է»:

- <sup>42</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 160:
- <sup>43</sup> Էտապը պահակախմբի հսկողութեամբ կալանաւորների տեղափոխումն էր մի կալանավայրից միւր, տուեալ դէպքում՝ Երկաթուղային վագոններով:
- <sup>44</sup> Շովատառէխի տեսակ:
- <sup>45</sup> Վագոնախցիկում:
- <sup>46</sup> Սուրէն Ղազարեան, *Դա Չպէրք Է Կրկնուի*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1988, էջ 108: (Յետագայ քաղուածքները կը լինեն այս հրատարակութիւնից):
- <sup>47</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 20:
- <sup>48</sup> Մկրտիչ Արմէն, *Պարուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 27:
- <sup>49</sup> Նոյն, էջ 19:
- <sup>50</sup> Սադրիչ:
- <sup>51</sup> Խափանարար, քայքայիչ:
- <sup>52</sup> Տե՛ս՝ ծան. 7:
- <sup>53</sup> Ղազարեան, *Դա Չպէրք Է*, էջ 12:
- <sup>54</sup> Նոյն, էջ 62:
- <sup>55</sup> Տե՛ս՝ ծան. 43:
- <sup>56</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 27:
- <sup>57</sup> Նոյն, էջ 35:
- <sup>58</sup> Տե՛ս՝ ծան. 29:
- <sup>59</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 35-36: Անպայմանօրէն արձանագրենք, որ Նոյն այդ սիրոյ փրկագործ ուժն էր, որ ապրեցրեց Մահարուն իր Երկրորդ աքսորի տարիներին: Անտոնինա Մահարին դարձաւ նրա հաւատարիմ, սիրելի կողակիցը՝ սիրելեան աքսորավայրից սկսած մինչեւ Երկրային կեանքի վերջին ակնթարթները:
- <sup>60</sup> Ալեքսանդր Ցիպկոյ (ծն. 1941, ռուս փիլիսոփայ, քաղաքագէտ), «Ստալինիզմի Ակունքները», *Նորք Ամսագիր*, 1989, թիւ 10, էջ 69:
- <sup>61</sup> Մկրտիչ Արմէն, *Պարուիրեցին Յանձնել Ձեզ*, էջ 7-8:
- <sup>62</sup> Խաչատուր Մուղղուսին 1921-1937ին եղել է Խորհրդային Հայաստանի պետանվտանգութեան կառոյցների պատասխանատու աշխատող, զբաղեցրել ՀԽՍՀ Ներքին Գործերի ժողկոմի պաշտօնը, իսկ 1937ին ձերբակալուել է, ենթարկուել դաժան հաշուեյարդարի նախկին գործընկերների կողմից ու զնդակահարուել:
- <sup>63</sup> Գաղափարական առաջնորդ:
- <sup>64</sup> Այսպէս էր կոչում Խորհրդային իշխանութեան առաջին տարիներին ձեատուրած Արտակարգ Ցանձնաժողովը, որն զբաղում էր անվտանգութեան հարցերով:
- <sup>65</sup> Նկուղում:
- <sup>66</sup> Մատնութիւն անելը, իշխանութիւններին իրազեկելը:
- <sup>67</sup> Համարժէք է հայերէն «մտածի՛ր հապա» հեզնական արտայայտութեանը:
- <sup>68</sup> Վահրամ Ալազան, *Տառապանքի Ուղիներով*, Երեւան, Խորհրդային Գրող Հրատ., 1990, էջ 50:

- 
- <sup>69</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 142:
- <sup>70</sup> Ճամբարները:
- <sup>71</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 92:
- <sup>72</sup> Նոյն, էջ 93:
- <sup>73</sup> Ղազարեան, *Դա Չպէտք է*, էջ 153:
- <sup>74</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 134-135:
- <sup>75</sup> Նոյն, էջ 16:
- <sup>76</sup> Վլադիմիրը ոռոսական քաղաք է:
- <sup>77</sup> Ղազարեան, *Դա Չպէտք է*, էջ 270:
- <sup>78</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 49:
- <sup>79</sup> Նոյն, էջ 91:
- <sup>80</sup> Նոյն, էջ 179:
- <sup>81</sup> Նոյն, էջ 93:
- <sup>82</sup> Կրլիս-դարիման նշանակում է քառասուն ջրաղաց՝ ըստ այդ գեղջուկի տոհմ քացատրութեան:
- <sup>83</sup> Տե՛ս՝ ծան. 32:
- <sup>84</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 128:
- <sup>85</sup> Տե՛ս՝ ծան. 32:
- <sup>86</sup> Մահարի, *Ծաղկած Փշալարեր*, էջ 31:
- <sup>87</sup> Նոյն, էջ 96:
- <sup>88</sup> Մկրտիչ Արմէն, *ժիրայր Գլենց*, Երեւան, Հայաստան Հրատ., 1967, էջ 5-6:
- <sup>89</sup> Գետ Ռուսաստանի հիւսիս-արեւելեան հատուածում:
- <sup>90</sup> Վալտէր Արամեան, *Վերադարձ*, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1983, էջ 430-431:
- <sup>91</sup> Լաւրենտի Բերիա (1899-1953), ազգութեամբ վրացի, 1938ից եղել է ԽՍՀՄ Ներքին Գործերի ժողկոմ, 1946ից՝ ԽՄԿԿ Գերագոյն Խորհրդի անդամ: Ստալինի մարդատեսաց, մասնատրապէս հայատեսաց ծրագրերի թիւ մէկ իրագործողը: 1953ին հակապետական գործողութիւններ իրականացնելու մեղադրանքով ձերբակալուել է ու գնդակահարուել:
- <sup>92</sup> Զաֆար Բագիրով (Բաղիրով, 1895-1956), ադրբեջանցի պետական, կուսակցական գործիչ, որ հակահայկական դիրքորոշում է ունեցել:
- <sup>93</sup> ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճեանի Ֆոնդ, Լրացուցիչ մատեան, թիւ 145:
- <sup>94</sup> Հայրենասիրութիւն:
- <sup>95</sup> Ազգայնամոլութիւն:
- <sup>96</sup> ԳԱԹ, Դերենիկ Դեմիրճեանի Ֆոնդ, Լրացուցիչ մատեան, թիւ 145: (Ընդգծումները հեղինակին են):
- <sup>97</sup> *Սովետահայ Պոեզիա, Քրեստոմարիա*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 675-676:

---

PICTURES OF STALINIST REPRESSIONS IN GURGEN MAHARI'S  
*BLOSSOMED BARBED WIRES* AND OTHER DOCUMENTARY WRITINGS

(Summary)

KARINE RAFAELYAN  
karine.rafaelyan@mail.ru

The 1930s regime in the former USSR spread an atmosphere of violence and terror in the country, killing both ordinary citizens and many talented scientists and artists.

The Armenians in the USSR acutely felt the Stalinist oppression as thousands of Armenians were killed or exiled.

The article focuses on a number of literary books which documented the brutality of these purges and transformed the stories into novels and short stories. The author highlights certain aspects of the psychology of those imprisoned and compares their agony and sufferings in the literary works of both Armenian and non-Armenian Soviet authors who were personally victims of this Stalinist hatred.

The author specifically highlights Gurgun Mahari's self account on what he had gone through and was able to transform into a literary jewel titled "Blossomed Barbed Wires".

After depicting the tragic lives of these prisoners, the author underlines how Mahari overcomes the hardships and terror of prison life through humor and sarcasm.